№ 2 (168) XVI ՏԱՐԻ ՓԵՏՐՎԱՐ 1906

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ԵՐԱԶՆԵՐ

Հանգստացած շրջապատող աւերակների գերեզմանական լռութեան գրկում, հպարտ իր արիւնոտ ձեռքերի հրաշակերտած ստրկութեամբ, Մեծ Մարգասպանը, որ միաժամանակ մեծ Համիսլամականն է մահմեդական աշխարհում, նեղբուած է նոր և „սրամիտ" ծրագիրների իրականացման...

Բազմատեսակ և յանդուգն են Իլդըզ Քիոսքի գաղտնարաններում մշակուող համիդեան ծրագիրները.— համիսլամական շաղկապ բոլոր երկրների մուսուլմանների մէջ, մի թագաւորով, որ սուլթանը պիտի լինի, մի կենտրոնով, որ Ստամբուլն է. վերադարձ Հիւսիսային-Ափրիկայի, Եգիպտոսի, Կովկասի, Նոյնիսկ հնդկական մահմեդականութեան դէպի սուլթանականութեան գիրկը. միացումն Ստամբուլեան խալիֆայութեան գայիսօնի տակ՝ բոլոր մահմեդական ազանդների՝ սիւննիների և շիաների՝ առանց որևէ քաղաքական խտրութեան. Շահի, գահակալ խաների և այլ սուլթանների խոնարհումն պօլսական վեհապետութեան առջև, և այլն և այլն։

Մի վեհապետ, մի խալիֆ, մի կենտրոն...

Եւ այդ ներոնամիտ ոճրագործը, որ իր խենթ յափշտակութեան մէջ չի նկատում կամ չը նկատել է ձևանում, թէ իր 30-ամեայ ամօթալի թագաւորութեան ժամանակ՝ Օսմանեան պետութեան մի երրորդ մասը՝ արդէն խլած իր արիւնոտ ճանկերից՝ դարձել է անկախ և անջատուած երկիր, որ իր աւերիչ բեժիմով սպառնում է նոր հատուածներ կազմել Բալկանի և Փոքր-Ասիայի սահմանների վրայ, հիւանդոտ յափշտակութեամբ երազում է տիրանալ այն գեղանի երկրին, որ Կ ո վ կ ա ս անունն է կրում, որը երբեմն սուլթանական թագի մարգարիտն էր, այժմ մարգարիտ՝ ցարական թագի, սգաւոր և անփայլ թէ մէկ, թէ միւս թագի վրայ...

Քաղաքական այդ ցնորքը, երկար տարիներ թագնուած վեհապետական գիւանի մէջ, այսօր՝ ռուսական ընդհանուր դժբախտութեան սև օրերին, հանդէս է գալիս ոչ միայն իբրև տենչանք, այլ և իբրև „մշակուած ծրագիր", ձգտող դէպի իրականացումն, փափագող տեղաւորուելու մահմեդական „ազգասէրների" գլխի մէջ, իբրև քաղաքական պրոգրամ, Նորագոյն մուսուլման սերունդների ոգևորութեան առատ աղբիւր...

„Էրզրումի շրջանից զօրք մտցնել Անդրկովկաս, առաջ խաղալ դէպի Կարսի, Երևանի, Գանձակի և Բաքուի նահանգները, ոտի կանգնեցնել տեղական մուսուլման ազգաբնակութիւնը և միացնել այդ երկիրը Օսմանեան պետութեան"—ահա սուլթանական նորագոյն երազ—ծրագիրը, որի մասին թէև ոչ մանրամասն, բայց որոշ տեղեկութիւն ունեն թէ՛ Կովկասեան շտաբի մէջ, թէ Պետերբուրգ, թէ՛ Լօնդօնի արտաքին գործերի մինիստրութեան մէջ, թէ Բերլին, ինչպէս վկայում են անպաշտօն ակնարկները, և որի շուրջը վաղուց փըսփըսուկներ են լսւում Կովկասեան թիւրք պօլիտիկոսների շրջանում, ներշնչուած Կ. Պօլսից, անթիւ և անսպառ էմիսարների միջոցով...

Այդ յանդուգն ծրագիրը թեև առաւ այն յիշատակելի օրերին, երբ ցարի հաւատարիմ զօրաբանակը ինչպէս գարնանամուտի ձիւն հալւում էր եապոնական գրոհի առջև, անսովոր ճակատամարտների այն ծանր շրջանում, երբ ապշած ու զարմացած մարդկութեան աչքերի առջև իր այլանդակ մերկութեամբ հանդէս եկաւ ռուսական զինւորականութեան անկազմ, անկերպարան վիճակը, նրա դասական անկարողութիւնը՝ դիմանալու կազմակերպուած թշնամու գիտակցական հարուածներին։ Անյաղթելի զինւորականութիւնը այլևս չը կար։ Իսկ ցարիզմը առանց զօրքի՝ մի շաբ է, քաղաքական սնգոյր, որ չի դիմանում ոչ արևին, ոչ անձրևին... Արտաքին փ շ ր ո ց ի ն յաջորդեց ներքին ցնցումը—յեղափոխական մարտը իր ամբողջ ոյժով ու յափշտակութեամբ, և մեծանուն ու անյաղթելի միապետութիւնը, որից դողում էր մահմեդական հարևանութիւնը՝ հարաւի սահմաններում, ակնյայտ դարձաւ իր ամբողջ նեխուածքով, կազմուածքի այլանդակ վերքերով, թարախակալ, վարակիչ և մահաբեր...

Ցարիզմի բթամիտ քաղաքականութիւնը՝ Կովկասեան թուրքերի շարժումով հակա—յեղափոխական մի զսպանակ պատրաստել հայկական վերանորոգիչ պահանջներին դէմ, որի արդիւնքն եղաւ Արեան տարին Կազբէկի և Արարատի ստորոտներում—աւելի ևս սիրտ ու ոյժ տուեց սուլթանական ծրագրին։ Արիւնը քաղաքական ծրագրների աւազան դարձաւ։ Թուրքերի հակահայկական ըմբոստութիւնը ցարի համար հակայեղափոխական շարժումն էր, իսկ սուլթանի համար՝ համիսլամական տիրապետութեան նախադուռն։ Եւ այսօր նոյն այն

մութ թուրք „պոլիտիկոնները“, որոնք անասնացած բիւրոկրատիային հաւատացնում՝ են, որ „հայկական կոտորած“ անելով, նրանք մի նպատակ միայն ունեն՝ ծառայել ցարի գահին, այլ շրջաններում և այլ անձանց հաւատացնում՝ են, որ հակահայկականութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ յարդարումն այն ճանապարհի, որով պիտի անցնի սուլթանական զօրքը, Կովկասը՝ Մեծ-Խալիֆին վերադարձնելու համար։

Ե՞րբ կը գայ այդ վճռական ժամը, երբ կը հնչէ խորհրդաւոր զանգը։—Այդ սուլթանն էլ չը գիտէ։ Երբեմն „վճռական ժամը“ յետաձգուեց Պօրտսմուտի անսպասելի հաշտութեամբ։ Քիչ յետոյ, երբ համառուսական ներքին փոթորիկը բռնկեց և հարաւում տեղի ունեցաւ Բագուի և Նախիջևանի „կոտորածը“—Իլդըզ-քիոսքի մեծաւորը դարձեալ շփեց իր ոսկրացած թաթերը։ Սակայն այս անգամ էլ բերկրանքը երկար չը տեւեց—Անդրկովկասի ամբողջ տարածութեան վրայ „կոտորածը“ կերպարանափոխուեց „ընդհարման“ և թաթար խուժանի հանդէպ հպարտօրէն բարձրացաւ յեղափոխական մարտիկ բանակը, որ այլ ևս չի փախչում, այլ փախցնում է, որ չի ընկճւում, այլ ընկճում է...

Այդ հպարտ, անձնուէր, ազատութեան հեռանկարով յափշտակուած յեղափոխական բանակը—թող լաւ յիշեն բռնաւորները — ընկճելու տրամադրութիւն չ՝ունի երբէք և ոչ մի պարագայի դիմաց։ Եւ „վճռական ժամին“—ենթադրենք մի վայրկեան—երբ սուլթանական զօրքերը կը մօտենան Կովկասի սահմաններին և թիւրք ազգաբնակութեան ականջին կը հնչէ ապստամբութեան կոչը, այդ դժբախտ օրերին և այդ դժբախտ փաստի դիւթական ազդեցութեան տակ՝ այսօրուան ցիրուցան, նոյնիսկ հակադիր ոյժերը, հայ, վրացի, ռուս, որոնց մինչև այժմ անկարելի եղաւ շաղկապել տեղական մուսուլմանական շահատակութիւնների դէմ, ձեռք ձեռքի տուած, միակամ և միաձոյլ՝ գրոհ կը տան դէպի վատթարագոյն թշնամին, որ երազում է այդ գեղանի երկիրը վերադարձնել մոնգոլական տիրապետութեան և հարեմապաշտ գազափարների առջև խոնարհեցնել ներկայի հսկայական շարժումը, տանջող ժողովուրդների իրենկելի ազատամարտը։

Մեր կռիւը ազատագրական ներքին կռիւ է, որ ձգտումն ունի վերանորոգել համայն Ռուսաստանի հետ և Կովկասի քաղաքական ու տնտեսական կազմը։ Ընջատման ծրագիր չ՝ունեն ոչ Հայկական նահանգները, և ոչ էլ Վրաստանը։ Եւ եթէ ներքին կռիւը մինչև այժմ միացրեց միմիայն յեղափոխական տարրերը, արտաքին դժբախտութիւնը և քաղաքական մեծագոյն աղէտը, որպիսին սուլթանական տիրապետութեան հեռանկարն է, կը շաղկապէ ցայժմ անտարբեր, հակադիր, նոյնիսկ ոսոխ տարրերը, մղելով բոլորին դէպի ընդհանուր վտանգի դաշտը, դէպի բոլոր ժողովուրդների ազատութեան դարաւոր թշնամին։ Մեծ դժբախտութիւնը շաղկապման մեծագոյն ոյժն է։

Ազատութեան նահատակների արիւնով ցողուած Կովկասեան հողը՝ ըմբոստ է այժմ։ Ցարիզմի դէմ մարտնչող ժողովուրդները՝ սուլթանականութիւնը տանել չեն կարող, չեն կամենայ, լսել անգամ չեն ուզի։ Նիկոլա չ՝ուզողը, Համիդ չի ուզենայ։ Եւ այն ձեռքերը, որոնք բարձրացան Պլեվէի, Գօրլիցինի, Անդրէեվի և Նաքաշիձէի վրայ՝ նրանք տասնապատիկ ոյժով ու սոսկումով գնդակ ու կրակ պիտի թափեն այն սև ոյժերի գլխին, որոնք պիտի տանեն ու տարածեն Շաքիրի, Նազըմի և Ջէքիի ուրուականները, նշանակը Օսմանեան անարգ բռնապետութեան...

Անդառնալիօրէն անցան այն „միամիտ“ ժամանակները, երբ հպատակ ժողովուրդները խաչով, խաչվառով էին ընդունում բռնապետների բանակները։ Ժամանակը անողոք դասագիրքն եղաւ։ Ոչ միայն սուլթանների կիսալուսինը, որ այսքա՞ն դարերից ի վեր սուգ ու շիվան է տարածում իր ամբողջ երկրի վրայ, այլ նոյնիսկ քրիստոնեայ ցարերի եռագոյն դրօշակը, որ սրանից հարիւր տարի առաջ խանդաղատանքով գրկուեց Կուրի և Երասխի ափերին, ըմբոստ դիմադրութեան փոթորիկ կը յարուցանի, երբ փորձի ծածանել ժողովուրդների գլխին՝ զէնքի ու զօրքի ոյժով։ Տիրապետութեան համար այժմ այլ պայման է պահանջուում նոյնիսկ Փոքր-Ասիական սահմանների վրայ—ժողովուրդների տրամադրութիւնը, նրանց բարեհաճ վերաբերմունքը դէպի եկուոր իշխանաւորը, դէպի տիրապետութեան ներկայացուցիչը։

Ո՞ւր է այդ բարեհաճ տրամադրութիւնը։ Նա թաղուած է արեան մէջ, դիակների կոյտերի տակ և կնքուած համաժողովրդական սուգի անմոռաց մեղեդիներով։ Ժողովրդական երևակայութեան առջև, հսկայական ժայռի նման, կանգնած է արեան Տասնամեակը, իբրև ատելութեան ու ոխի, թշնամանքի ու մարտի յաւիտենական յուշարձան։ Նա շատ երաշներ ի դերև կը հանէ։

Խիզախ, բայց անմիտ երաշներ, որոնք պէտք է թառամեն նոյն քարացած ուղեղի և նոյն շրջանի մէջ, ուր նրանք ծնունդ առան։ Սուլթանական որևէ ծրագրի համար, միշտ մահաբեր, միշտ ստրկացնող, միշտ հակաքաղաքակրթական, չը կայ այլ ևս նպաստաւոր հող ոչ մի տեղ, նոյնիսկ ցարերի լուծին ենթակայ երկրի մէջ։ Համայն ըմբոստացումը կը լինի համիդեան ձգտումների միակ պատասխանը, նրա քաղաքական երազների միակ „մեկնաբանութիւնը“... Ժողովուրդները, նոյնիսկ կիսաստրուկ, դէպի ազատութեան կենսատու աղբիւրն են ձգտում, և երբէ՞ք դէպի այն մահաբեր անապատը, ուր թագաւորում է մոնգոլեան մտքի ստեղծած վատթարագոյն ռեժիմը—սուլթանականութիւնը...

ՀԱՅՈՐԴԻՆԵՐԸ

Թ

ՄԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Եւ Սասուեր մը ընդերկար մենախօսեց գիշերուան ժամերուն մէջ կանգուն՝
Ձայնը դողդոջ էր, սիրտը սիրով լեցուն, աչուըները մխրապատ և ինք իր գաղափարէն գեղեցիկ՝
Նուիրուածքներէն և արցունք կը հոսէր և կայծեր կ'արձակուէին և հոգին չքեղօրէն ցեղին հոգին էր,
Եւ այսօր կուգէր իր տառապանքին և գոհը ըլլալ և իր իդէալին հերոսը միանգամայն...

„Հայրենիքիս վրէժին խօսքերը և տառապանքիս տարիները ուղեղիս մէջ՝
Քալէ՛ցի և քալէ՛ցի, յոգնած, ըմբոստ, ճշմարտախնդիր և մինակ,
Արիւնի քաղաքներէն ուրիշ քաղաքներ և գիւղերէ ի գիւղ...:
Ձայն չի կար: Մեռելութիւն ամենուրեք և աւերակներ լեռնակուտակ,
Ամէն երդիք իր անուրին վրայ կործանուած՝ և ամէն աղբիւր իր երջանիկ երգին...
Արօտավայրեր արիւնով ոռոգուած՝ և հնձաններ գերեզմանոցներու նման,
Ճամբաներուն վրայ ոսկորներու լաց ու կոծ՝ և այրիներ՝ և դառնագէմ յուսահատներ,
Անագորոյն օրէնքին դէմ ըմբոստներ՝ և ջախջախուած նորածիններ գետնաքերքի քարերուն դէմ...
Արդարութեան պաղատողներ՝ և ուրիշներ որ տակաւին խաչափայտերու կը փաթթուին...
Դիակնե՛ր և դիակնե՛ր որոնց գլուխները միայն մախիրներէն դուրս է ցցուած՝
Հունձքերուն վրայ դիա՜կներ, աւազաններուն երեսը և դիա՜կներ իմ սարսափահար աչքերուս տակ...
Շղթայակապներ բանտին դռներուն քով և մեռելներ յամառող պատերուն դէմ կանգուն...
Կիսամեռներու ձեռքեր՝ դեռ կեանքին արեգակը դառնութեամբ աղէ՛րսող,
Ուրիշներ որ կուգէին դեռ ապրի՛լ մահուան ճանապարհէն ալ անդին...
Եւ ուրիշներ սիրուած հողին համար անգամ մը ալ իրենց արցունքը վար կուլային..."

„Ո՜վ անեզրութի՜ւն դիակներու ի՜նչ չափով քեզ կրնայի չափել,
Արիւն է որ կը բուրէ և ես թափառականս, արիւն է որ կը շնչեմ...
Եւ աչքերս տխրաքայլ, ո՞ր ժամանակէն ի վեր, կարմիր հողին կը կպչին...
Մարդ չէ ծնած այստեղ կարծես և ոչ ալ մարդ է մեռած՝
Այլ հարուշուք բնութիւնն է որ իր կողէն դիակներ է դուրս նետեր...
Եւ երկինքը իր աստղերէն վար իր արիւնն է որ մեր բոլորին վրայ կը հոսրափէ...
Տասը տարուան ճանապարհո՞րդ, ո՞ւր եմ այսօր, ո՞ւր է ճամբաս,
Ո՞ւր է տունս, ո՞ւր վերարկուս, ո՞ւր է լապտերն իմ սարսափի...
Նպատակս պարտուեցա՞ւ թէ արժանի չեմ անոր խօսքին...
Ի՞նչ կնճիռ է այս կնճիռք որ ճակատիս վրան ակօսուեցաւ,
Խղճի խայթն է որ փորեց զայն թէ ժամանակն բռնակալ...
Ո՞ւր են այն փարոսները որոնց լոյսերէն գինովնալով հասայ եկայ,
Ե՞րբ մարեցան: Ո՛չ, դեռ կը վառին, յառաջացէ՛ք դեռ կը վառին,
Ըսին ինծի: Ջուրի ձայն մը, կը ճանչնամ քեզ սարսափահար Եփրատն ես դուն,
Ահաւասի՛կ Վանայ ծովը:—Յառաջացէ՛ք, ըսին ինծի, Արարատէն ալ անդին..."

„Ատելութի՜ւն, ատելութի՜ւն, վերջապէս քու փոթորկիդ թափն իմացայ...
Ահաւասի՛կ կեանքի ձայներ, պայքարի փայլ և դիակներ օդերուն մէջ...
Ահաւասիկ կռուին շեփորը, ո՜վ Մասիս որ այդ ծագեդ կ'արձագանգուիս...
Բոցաշէ՛ ուրեմն պատանքներդ անցեալներու սուգերուն մէջ բաժնելէն,
Եւ թո՛ղ գլխեդ անցնող ամպերն՝ աչքերուդ արիւնը ցամքեցնե՛ն...
Նոյն ցեղն է՛ որ աչքի եկաւ, նոյն ցեղն է՛ որ կը զարնէ՛, նոյն ցեղն է որ այսօր կ'ապրի,
Եւ ի՛նչ նախճիր, ի՛նչ սրածում, ի՛նչ յաղթական ճակատամարտ...
Ի՛նչ պաղատանք, ի՛նչ քաջութիւն թշնամին անասնական խաժամուժէն...
Եւ եղբայրներս են որ կը ձայնեն: „Գթութիւնը մենք չե՛նք ճանչնար, միայն վրէժն է՛ ճշմարիտ":
Ձեզի՛ փառքը, ձե՛զ ապագան, ձե՛զ պատմութիւնը ոսկեռաս,
Տասը տարուան արիւն ունի՛նք մեր ցաւին քով ծովատարած,
Եւ այսօր է՛ որ որբեցինք մեր ճակտին մուրն ստրկութեան,
Արշալոյսներ պիտի ծնին, ծաղկաստա՛ններ, ձեր ճակատները պսակող...
Եւ Հայրենիքն ահաւասի՛կ ձեզի ղրկեց իր չորս ծայրէն իր զաւկները զինավառ,
Հարուածեցէ՛ք, հարուածեցէ՛ք, մինչև որ Արդարութիւնը ձեզ բոլորդ համբուրէ..."

„Ո՞վ էք դուք որ այս գիշեր կ'ունկնդրէք մենախօսիս վշտերուն,
Մտածումիս մէջ իմ ամօթէս ես սկսայ կատաղութեամբ արտասուել...
Ո՞ւր կ'արշաւէ՛ք, ո՞վ էք դուք, եղբա՞յր, ընկե՞ր, թէ զինակի՞ց,
Օ՛, ես ալ ճանչցայ Տառապանքը, ո՞ւր կ'արշաւէք, զիս ալ առէ՛ք, զիս ալ տարէ՛ք ձեզի հետ..."

ՍԻԱՄԱՆԹՕ

ՀՐԱՄԱՆ ԲԵՆԴԵՐԵԱՆ ԳՆԴԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻՆ

Առաջ ենք բերում այդ պաշտօնական կոչի ճիշտ թարգմանութիւնը, իբրեւ ապացոյց, թէ որպիսի սեւ ու նենգամիտ պրոպագանդ է մղւում Կովկասում՝ զօրքի մէջ: Սա բազմաթիւ վկայագրերից մէկն է միայն, եւ տարաբախտաբար, ինչպէս միշտ, ներշնչւած բարձրից, այն զօրեղների կողմից, որոնք վարժւել են հրամայել եւ բազնել...

—

Բենդերցիներ!

Սօցիալ-յեղափոխականները այլեւս դադարեցին աչքակապուկ խաղալ: Իրենց ծրագրներում—որ նրանք ցրում են ամէն տեղ, բոլոր միտինգներում—նրանք յամառութեամբ պահանջում են հանրապետութիւն: Դա նշանակում է՝ կորչի ցարը: Կորչի այն ցարը, որ հոկտեմբերի 17-ին մանիֆէստով ժողովրդին փրկարար ազատութիւն տւեց, որ յանձնեց ժողովրդին իր բոլոր իշխանութիւնը: Այն ցարը, որ իրեն վերապահեց ոճրագործներին ներելու եւ պետական դումայի մշակած օրէնքները հաստատելու իրաւունքը միայն: Ու այդպիսի ցարին նրանք կամենում են գահընկէց անել: Ի՞նչ բանի համար. որպէսզի իրենք յափշտակեն իշխանութիւնը:

Եւ ո՞վքեր են կանգնած սօցիալ-յեղափոխականների գլխին: Այդ դուք ինձանից աւելի լաւ գիտէք. բացի մի քանի ռուսներից՝ այստեղ Բագւում ամենից շատ աշխատում են վրացիները, հայերը, հրէաները... Ու բոլոր այդ մարդիկ մի բան են միայն ուզում,—օգտւելով Մայր-Ռուսաստանի դժւարին վիճակից՝ աշխատում են առանձին թագաւորութիւն կազմել: Արդէն այժմ իսկ Գուրիայում կազմակերպւել է անկախ կառավարութիւն...

Յիշեցէք՝ թէ ի՞նչ են գրում յեղափոխականները իրենց բոլոր թռուցիկների, բոլոր լրագիրների ճակատին—„Պրոլետարներ բոլոր երկիրների, միացէք“... Ի՞նչ է նշանակում դա. այն, որ նրանք հայրենիք չեն ճանաչում, որ յանուն իրենց գործի նրանք կամենում են Ռուսաստանից նորանոր նահանգներ անջատել: Այսօր կը բաժանւի Կովկասը, վաղը լեհական-թագաւորութիւնը, ապա Ֆինլանդիան, որից յետոյ Աւստրիան կը նւաճէ Վօլինի եւ Պօդօլի նահանգները, Ռումինիան՝ ձեռք կառնէ Բեսարաբիան, Եապոնիան չի ննջի ու Չինաստանի հետ միասին կը տիրեն Սիբիրը, ապա հետզհետէ կ՚անջատւին Բուխարան, Խիվան... Ի՞նչ կը մնայ մեր Մայր-Ռուսաստանից: Մտածելն անգամ սարսափելի է...

Յիշեցէք թէ ի՞նչ ստորութիւններ են անում յեղափոխականները... Սպանութիւնները յաջորդում են սպանութիւններին... կոտորում են ոչ միայն կայսրի հաւատարիմ ծառաներին, այլ եւ այն ամենքին, որոնք պաշտպան են կանգնում արդարութեան. ով համարձակւում է գրել նրանց դէմ՝ նրան հալածում են. բռնութեամբ ներս են խուժում տպարանները եւ սպանութեան սպառնալիքներով արգելում են ընդդիմախօսական յօդւածներ տպել... Վերջապէս դիմեցին վերջին միջոցին: Սպառնական ճանապարհով երկաթուղիների, պօստ-հեռագրատների գործադուլ կազմակերպեցին... Դուք ինքներդ ամբողջ ամիսներ մի տող անգամ, մի կոպէկ անգամ չէք ստանում ու հնարաւորութիւն չունէք ձեր մասին լուր հաղորդել ձեր սիրելիներին... Գործադուլների պատճառով դուք ներքնակներ ու բարձեր չ՚ունեցաք, որովհետեւ մթերային վարչութեան ուղարկած բաները Թիֆլիսից անկարելի եղաւ ստանալ... Նայեցէ՛ք՝ թէ ի՞նչ են կատարւում կայարաններում... Շաբաթներով մարդիկ նստում, սպասում են... Երեխաները հիւանդանում, մեռնում են քաղցից եւ ցրտից, իսկ չարագործները ոչ մի ուշադրութիւն չեն դարձնում... Երկաթուղիները չեն աշխատում, ամէն տեղ դադար. աղքատ մարդը հնարաւորութիւն չունի ո՛չ մի տեղ կոպէկ անգամ աշխատել, իսկ բոլոր ապրանքների գները բարձրացել են չափազանց: Տեղեր կան, ուր նաւթի գրւանքան արժէ 10 կոպէկ, իսկ նրանք ամենուրեք աղաղակում են՝ թէ իրենք ժողովրդի հոգատարներն են... Ահաւասիկ ի՞նչպիսի հոգատարութիւն..

Բայց այդ գործադուլ անողները ամենից շատ վնաս են հասցնում կառավարութեան. երկաթուղիներից, պօստ-հեռագրատներից օգտւելու անհնարութեան պատճառով անկարելի է նախապատրաստական կարգադրութիւններ անել պետական դումայի բացման համար... Յեղափոխականների նպատակն է պետական դումայի բացումը արգելել, որովհետեւ նրանք հանրապետութիւն են ուզում: Չը կարծէք թէ գործադուլ են անում բոլոր ծառայողները: Ոչ, ահագին մեծամասնութիւնը չէ կամենում գործադուլին մասնակցել, որովհետեւ կառավարութիւնը կատարել է նրանց խնդիրքը, տւում է աւելի ռոճիկ... գործադուլ են անում շատ քչերը եւ միւսներին ասում. „գործադուլ արէք մեզ հետ միասին, այլապէս ձեզ կսպանենք“... Ահաւասիկ ինչպիսի միջոցներով են յեղափոխականները գործադուլներ յաջողեցնում... միայն թէ հասնեն իրենց նպատակին:

Իսկ կարդում էք արդեօք նրանց թռուցիկները կամ նրանց լրագիրը՝ „Բագու“ անունով: Ամէն ինչ սուտ է... Յիշեցէ՛ք, հոկտեմբերին դուք ձեր կրծքով պաշտպանեցիք դժբախտ մարդկանց. գիշերները չը քնեցիք, չը կերաք, տանջւեցիք... Եւ ի՞նչպիսի վարձատրութիւն: Ե՛ւ շրջաբերականների մէջ եւ իրենց „Բագու“ լրագրում ձեզ իբր գազաններ նկարագրեցին. ասացին, որ դուք սպանում էիք անզէններին, կողոպտում էիք, երեխաներին կրակն էիք նետում... Էլ ստութիւն չը մնաց, որ չը հնարէին ձեր մասին: Բոլոր ազգերի ու իմ մասին գրեցին ամենազզւելի զրպարտութիւններ... Այժմ դիտմամբ խելքից հանում են ձեզ՝ ստիպելով ամենաանիրագործելի պահանջներ ներկայացնել: Չէ՞ որ այդ բոլորի համար դրամ է հարկաւոր. ո՞րտեղից գտնեն նրանք: Կը հաւաքւի պետական դուման՝ ազատօրէն ընտրւած ազգից ու օրէնքներ կը մշակէ: Եւ ոչ ոք—բացի դումայից—չէ կարող այդպիսի լուրջ խնդիրնե՛ր վճռել...

Ու մի՞թէ դուք կարծում էք, որ այդ հրէաները, հայերը, վրացիները, ռուս թերուսները եթէ իրենց ձեռքն առնեն իշխանութիւնը՝ ձեր բոլոր պահանջները կը կատարեն: Ոչ, նրանք կամենում են զօրքի մէջ խռովութիւններ սերմել միայն, որպէսզի ձեր օգնութեամբ գահընկէց անեն ցարին: Ու յանդգնութեան մէջ այնքան առաջ գնացին դրանք, որ իրենց—„Բանւորական պատգամաւորների խորհրդի լուրեր“—անունով նոր լրագրում օգտւեցին ձեր սխալից՝ դեկտեմբեր 12-ի միտինգից, որի մէջ հէնց իրենք ամենախայտառակ միջոցներով մտցրին ձեզ... Նրանք ուղղակի գրում են, որ դուք նրանց հետ ձեռք-ձեռքի տւած գնում էք կառավարութեան դէմ: Որպիսի՜ զզւելի սուտ. եւ ի՞նչպէս են համարձակւում նրանք այդքան ստոր կերպով զրպարտել ձեզ, ազնիւ բենդերցիներ. ձեզ, որ հասկանում էք երդման սրբութիւնը. ձեզ, որ պատրաստ էք ձեր կուրծքերով պաշտպանել կայսրին: Ես ձեզ շատ լաւ եմ ճանաչում ու չեմ հաւատում, որ ձեր մէջ թէկուզ մի հատիկ դաւաճան գտնւի, չեմ հաւատում, որ ձեզանից թէկուզ մէկը դաւաճանի Գեօրգիեւսկի դրօշակին, դրօշակ, որի տակից ի փառս կայսրի եւ Մայր-Ռուսաստանի անցել են այնքան յաղթանակներով ձեր պապերն ու հայրերը...

Ես խորապէս համոզւած եմ, որ վճռական րոպէին ամբողջ զօրքը մի մարդու նման ոտքի կելնէ ինձ հետ միասին՝ ընդդէմ բոլոր ապստամբների: Բաւական են ստերը, բռնութիւնները, անկարգութիւնները: Միաբերան աղաղակենք. „կեցցէ մեր ռուսաց Կայսր-Հայրը“ ու վեր բարձրացնենք մեր ջերմ աղօթքները այն անձի առողջութեան համար, որ ժողովրդին ազատութիւն տւեց: Թող Աստւած օգնէ նրան եւ ոյժ տայ մինչեւ վերջ տանել իր Մեծ ողորմածութիւնները՝ հոկտեմբեր 17-ի մանիֆէստով արտայայտւած...

„Այս“ հրամանը զօրաբաժնի գլխաւորները անձամբ պիտի կարդան բոլոր զինւորներին եւ զրոյցի ձեւով պիտի բացատրեն կարդացածը:

Բենդերեան գնդի հրամանատար՝ **ՏՕԼՄԱՉԵՎ**.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ՍԱՍՈՒՆ—ՏԱՐՕՆ

(Թղթակցութիւն)

—

Դեկտեմբեր 15

Մեր գործի կանոնաւոր զարգացման համար՝ պէտք ունինք վիճակագրական մանրամասն ուսումնասիրութիւններու. ասիկա անվիճելի է ու ըստինքեան հասկանալի: Սակայն խնդիրը հոն է, որ Տարօնոյ և Սասնոյ վիճակագրութիւնը կազմելու համար՝ մենք միշտ հանդիպած ենք զանազան խոչընդոտներու ու արգելքներու: Հնարաւորութիւն չունինք դուրս ելնելու, գիւղեր պտտելու, ժողովրդին հարց ու փորձի ենթարկելու: Զինուորներուն մէջ աշխատող ու կարող ձեռքեր չի կան այդ գործը կատարելու: Այս անյարմարութիւններէն զատ ժողովուրդը ինքն ևս ոչ մի կերպ չի կրնար մեզ աջակցիլ վիճակագրական ուսումնասիրութիւններու խնդրին մէջ՝ վասնզի նախորդ փորձերը միշտ կասկածելի են դարձուցեր: Ժողովուրդը բացարձակ ահաբեկման մէջ է:

Հայ գիւղերը կամաց-կամաց կը դատարկուին հայերէ ու անոնց տեղը իսլամները կը բռնեն: Վերջին տասնամեակի ընթացքին մէջ Սասնոյ լեռնաշղթայի արեւմտեան կողմը գտնուող քանի մը հայ գիւղեր բռնի իսլամացում են ընդուներ:

Մշոյ դաշտին մէջ շատ գիւղեր ենթարկուած են թալանի ու կոտորածի: Քրդերը և Թիւրքերը մտեր են դաշտ, դուրս մղեր հայերը և տէր դարձեր անոնց հողերուն ու կալուածներուն: Դաշտի բնիկ մեծագոյն մասը փախեր, գաղթեր է, իսկ մնացեալ փոքրամասնութեան վիճակը Գիրք գիւղի սոսկալի ու արիւնոտ վիճակին կը նմանի:

Գաղթական հայերու քանակութիւնը չափազանց մեծ է. գիւղեր կան, ուր 100 տունէն քսանը գաղթած են. գիւղեր կան, ուր 100-էն քառասունը գաղթած են. գիւղեր ալ կան, որոնք ամբողջովին գաղթած են: Մշոյ դաշտին մէջ եկած բուն դրած բազմաթիւ քրդեր ամեն կերպ կաշխատեն հային ամբողջ կեանքը, գոյութիւնը ոչնչութեան մատնել՝ խլելով անոնց սեփականութեան իրաւունքը, տիրանալով անոնց կալուածներուն ու ստացուածքին:

Քրդերէն բացի՝ Մշոյ դաշտի քանի մը գիւղերուն մէջ— Արդիրթ, Ցուշտամ, Վարդենիս—կառավարութեան հրամանով ու կարգադրութեամբ Չերքէզներ եկած հաստատուած են: Յեղափոխականներու գոյութիւնը իբր պատրուակ առնելով՝ ջարդած, կողոպտած ու աւերմունքի են ենթարկած Մոկունք, Մկրագոմ, Գոմս, Ցունան, Բերդակ, Ցրօնք, Գոմեր, Առվառինջ և ուրիշ գիւղեր զօրքի, ոստիկանութեան ու իսլամ խուժանի միջոցաւ:

Մշոյ դաշտին յարակից Պուլանըղ գաւառակը — ուր քառասունէ աւելի բազմահայ գիւղեր կան—երեք չորս բացառութեամբ միայն՝ քիւրդ շէյխերը և Ճիպրանլը, Հասանլը աշիրէթներու պետերը գրաւեր են գրեթէ և բռնի իրանց սեփականութիւնը դարձուցեր: Հայերու բողոքները ո՛չ մի արդիւնք չեն ունեցած: Այս ամէնը մահացու կերպով կազդեն հայ ազգաբնակութեան թէ տնտեսականին և թէ բարոյականին վրայ:

Նոյն երեւոյթը կը կատարուի և ուրիշ գաւառակներում ու գաւառներում: Դալուորիկ և Սէմալ գիւղերուն մէջ հաստատուած զօրանոցները կը ձգտեն իրականացնել նոյն նպատակը: Այս պարագան չափազանց ծանր կերպով կազդէ հայ ազգաբնակութեան թուին վրայ: Սասնոյ արեւմտեան մասի Կ ի ն ճ գաւառի Մառաշգուլթ, Ճապաղջուր, Կինճ, Չքթէ և Փէթար գաւառակներուն մէջ հայերու թիւը վերջին տասն տարւայ ընթացքում կիսով չափ իջեր է... Իսկ հողերու քանակութեան տասին հինգը չէ մնացեր հայերու ձեռքին մէջ: Բազմաթիւ գիւղեր իսպառ դատարկուած են հայերէ ու տեղի տուած զանազան քրդական ցեղերու: Մնացեալ գիւղերուն իւրաքանչիւրին մէջ հազիւ 3—20 հայ կը գտնուի:

Ճապաղջուրում Դարպասան անուն գիւղի մը մէջ 6 հայ տուներ բոլորովին «քրդացան». նոյնպէս «քրդացան» Չքթէ գաւառակում գտնուող բոլոր հայերը, իսկ Փէթար գաւառակում, ուր քանի տարի առաջ 24 հայաբնակ գիւղեր կը գտնուէին՝ ժամանակի ընթացքին մէջ ցրուելով ու բռնի իսլամութիւն ընդունելով հազիւ մնացեր են վեց հայաբնակ գիւղեր: 1895 թուականի մեծ կոտորածին Փէթարում կային տակաւին 12 հայաբնակ գիւղեր: Ապա բռնի իսլամացուցին ջարդէն ազատուողները, այնպէս որ վեց գիւղեր մինչեւ այսօր ալ բռնի իսլամութեան մէջ կը գտնուին:

Սասնոյ արեւելեան բաժնի Բռնաշէն ու Խուլթ գաւառակներում, ինչպէս և Մօտկան գաւառակին մէջ կրօնափոխութիւն վաղուց է սկսած: Վերջին տասն տարւայ ընթացքում մանաւանդ բոլորովին ուժեղ բնաւորութիւն է ստացած այդ գործը: Այս երկու գաւառակներում 45 հայ գիւղեր կը գտնուին, բոլորն ալ նախապատմական դարերէ սկսեալ, ուր վաղեմի և հոյակապ եկեղեցիներ կան: Անոնց մէջ են նաեւ Խուլթ և Մօտկան, որոնք այնքան մեծ դեր են խաղացած Սասնոյ անցեալ ռազմային և տիրապետող գործունէութիւններու մէջ: Այս 45 գիւղերէն իւրաքանչիւրին մէջ այժմ առաւելն 3—15 տուն հայեր կապրին: Ազգաբնակութեան մի մասը փախած, ցրուած է, իսկ անոնց կալուածները վերջին մէկ-երկու տարւայ ընթացքում բռնի գրաւուած են Պալըքցի, Սասնցի և Խուլթեցի բուած քրդական աշիրէթներէն: Անցեալ տարուընէն մինչեւ այսօր այս գիւղերէն եօթն ևս բոլորովին դատարկուած են:

Գրաւումները տեղի կունենան յարձակումներով: Սպառազէն քիւրդերը գիւղը կը մտնեն, ոչխար-տաւարը կը թալանեն, գիւղացիներէն մի քանիները կսպանեն, մնացեալները կը փախցնեն ու կը գրաւեն հողերը: Սասնոյ մէջ 7500-7800 կարօտներ կան, նոյնչափ ալ դաշտում: Ասոնց վրայ աւելցուցէք նաեւ զինուորներէ, դատապարտութիւններէ, չարախօսութիւններէ ու հետապնդումներէ հալածականները, որոնք հարիւրի մօտ են, ապա 260—300-ի չափ բանտարկեալներ: Ասոնք ամենն ալ օգնութիւն կաղաղակեն. ո՞ր մէկին կրնայ օգնել կազմակերպութիւնը:

Անցեալ տարւայ ժողովրդէն խլած զէնքերու դատին պատճառով 152 հոգի գիւղերէն պիտի դատուին: Ղարցի դէպքին համար 50—60 հոգի պիտի դատաստանի ենթարկուին: 30—40 հոգի Գ ո մ ս է ն արդէն փախստական են, թող որ անոնցմէ 30 հոգի արդէն բանտումն են՝ երկու ծերունի քահանաներով միասին: Ամեն կողմէ օգնութիւն կը պաղատեն... ի՞նչ կրնանք ընել...

Կառավարութիւնը լրտեսներ է վարձեր ֆէդայիներու և գործակիցներու համար. մէկ կողմէն զինուորներ կը պատեցնէ, միւս կողմէն ջանադիր կ'ըլլայ անոնց թունաւորել տալ: Երկիւղ կայ, որ կալերէն վերջ նորանոր դէպքեր պատահին այս կողմերում: Եւ մեր ժողովուրդը երկաթէ, որ կը դիմանայ:

Այս տարի կօնսուլների այցելութիւններ չ'պատահեցին մեր կողմերում: Գարնան միայն ֆրանսիական կօնսուլը եկաւ փող բաժանելու: Կարծէք դատապարտելի անտարբերութիւն մը կը տիրէ կօնսուլական շրջաններու մէջ: Բիթլիսի անգլիական կօնսուլը կը քնանայ, իսկ ռուսականը մ՛ հարցնէք: Նա իրեն տրուած մի քանի բողոքագրերը կառավարութեան է յանձներ...

Օրերս բարձրագոյն հրաման է հաներ՝ շուտով հաւաքել մնացորդ տուրքերը: Մուսուլմանները օրէնքի տակ չեն. պարտք ալ ունենան՝ չեն վճարի: Քաւութեան նոխազը մեր ժողովուրդն է: Մեր բախտէն հացահատիկն ալ սուղ է այս տարի: Հայ ժողովրդի ձեռքը այլեւս հաց չէ մնացած: Ամեն կողմէ կողոպտուած է...

ՆԱՄԱԿ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԷՆ

—

ՎԱՆ, 6 Նոյեմբ. 1905.

Այս տարի ալ ժողովրդի յոյսերը չիրականացան. ակնկալուած հունձքը առատութենէն զուրկ է. դեռ աւելին. աւելի պակաս քան անցեալ տարուանը: Դեռ կալի վրայ ցորենը և միւս հացահատիկները պահպանեցին գարնան արժէքը, իսկ աշնան մօտենալուն աւելի և աւելի ուժ ստացաւ սկիզբները տատանուող փիացան: Ներ-

կայիս մէջերը դեռ աշնան կէսն ենք, ցորենի չափը կ'արժէ 55—60 դահեկան, իսկ տարիկանինը՝ 36—40։ Հիմակ-ուընէ ժողովրդի մէջ սովի նշաններ ակներև են։ Ցանուած սերմն ալ 2 ամսէ ի վեր հողի մէջ ձգուած և առանց անձրևի, բարեբախտաբար ուշացած անձրևը սկսաւ տեղալ. մինչ այդ բնութիւնը ցրտած էր և նոյն իսկ դաշտերը ձիւն իջած, իսկ սարերը և լեռնաշղթաները արդէն սպիտակ սաւանով ծածկուած են բաւական ժամանակէ ի վեր։

Արտասովոր եռանդով կը գանձուին կառավարական տուրքերը. ո՛չ մի խստութեան և անգութ վայրագութեան առաջ կանգ չեն առներ։ Շաբաթ չանցներ որ թահսիլտարները գիւղը ազատ թողնեն. մէկը չգացած միւսը վրայ կը հասնի. ամէն մէկը մի անուն, մի պաշտօն ունի, սակայն նպատակը մէկ.—տեսակ տեսակ հարկերու գանձում։ Իսկ օրէնքի կատարեալ բացակայութիւն։ Մարդ չի հասկնար և հնարաւորութիւն ալ չունի կառավարութեան հարկահաւաքութեան մասին որոշ գաղափար կազմել։ Մի անգամ՝ կուգան և ներկայ տարուան նուփուսը կը պահանջեն, ուրիշ ո՛չ մի խօսք։ Հարևան գիւղի մէջ այլ պահանջ է— նախորդ տարիների պ ա գ ի յ է ն ե ր ի լրացման ինդիրն է մէջ բերուած։ Թահսիլտարներ կուգան՝ ամէն մէկը իր ուրոյն պահանջներով և բռնի գանձելու համար իրեն յատուկ տանջանքի ձևերով։ Մի բան պարզ կ'երևի որ գանձումները և գանձման համար ի գործ դրուած միջոցները կախուած են պաշտօնեաներու անձնական քմահաճոյքէն և նայելով թէ գիւղացին, որուն տան մէջ հիւրընկալուած են՝ ինչ ընդունելութիւն ցոյց կուտայ իր ինքնակոչ հիւրին։ Ով ճարպիկ է, նա կրնայ սիրաշահել՝ զանազան խոստումներով և նէրներով։ Բայց ժողովրդի մօտ ուժ չէ մնացեր և ո՛չ ալ սիրտ սիրաշահելու։ Նա ինքզինք յանձնած է բաղդի քմահաճոյքին և ամէն մէկ երևոյթը կը բացատրէ ճակատագրով։ Իրարմէ շատ քիչ հեռաւորութեան վրայ գտնուող գիւղեր տարբեր բաղդի կ'արժանանան։ Մի տեղ կը բաւականանան ներկայ տարուան տուրքով, իսկ միւս տեղ կը հեծեն պագիյէներու ծանրութեան տակ. և կը գանձեն ամենայն անխըղճութեամբ, առանց շունչ քաշել տալու, ինչ գնով ալ լինի, որպէսզի նոր պագիյէ չմնայ։ Դէպքի ատեն ամէն բան տարուած է, բայց դէպքէն վերջը բոլորին յաջողած է իրենց հիմնայատակ եղած տուն ու տեղը, տնտեսութիւնը վերականգնել— եթէ ոչ առաջուան աստիճանին, գէթ իրենց գոյութիւնը քարշ տալու չափ։ Գիւղեր կան որ իրենց հողերէն են զրկուած. մասամբ գրաւուած են բռնութեամբ, մասամբ ալ վաշխառուներու ձեռքով։ Օրինակ,- ներքին Հայկայ Զորի Անգղ գիւղը այս պահուս ամենանեղ դրութեան մէջ է. գիւղը ունի 90—100 տուն-ծուխ։ Գիւղի մէկ մեծ թաղը դէպքէ ի վեր ամայի է և անմարդաբնակ և միւս մասի տներէն ալ 15—20-ը աչքի կը զարնէ արական սեռի բացակայութեամբը։ Որբևայրի կիներ կամ պառաւ տատեր՝ նստած իրենց քարուքանդ օճախի վրայ՝ իրենց ճակատագրի հարուածները կը կրեն անտրտունջ. անցած դարձածը Աստուծոյ—„Ամենաողորմած Աստուծոյ“ տնօրինութեան կը վերագրեն։ Այս գիւղի պագիյէն տարիներու ընթացքին մէջ հասած է 45—50,000 դահեկանի։ գիւղի անչրդի և պտղաբեր „սարի հողերը“ անցեր են Արտամէտցւոց „թիւրքերի“ ձեռքը՝ ամէն մէկ արտ 10—20 կամ աւելի ղուրուշ Սալէֆի փոխարէն։ Իսկ մնացած ջրարբի տեղերը թէ՛ շատ քիչ են և թէ մանաւանդ շատ անբերրի։ Սկիզբները այդ գիւղի միակ ապրուստը եղեր է պանդխտութեան գացած մարդկանց աշխատանքը։ Միայն այս գիւղէն Պօլիս և այլ տեղեր պանդխտած են եղեր 87 հոգի՝ 97 թուականին, որոնք և ահագին քանակութեամբ դրամ կ'ուղարկէին, դրամ որով կը հոգացուէր թէ կառավարութեան տուրքերը և թէ ընտանիքներու ապրուստը։ Իսկ այժմ դրսի եկամուտէն կտրուած, հողերու լաւագոյն մասէն զրկուած, ուրիշ աշխատանքէ զուրկ— բնականաբար պէտք է հեծեն պարտքերու և պագիյէներու տակ։ Ես նկարագրեցի մի գիւղի վիճակը. հապա միւսնե՞րը։ Այս տարի ամբողջ Հայկայ Զորի գիւղերը, բաց առեալ մէկ-երկուսէն, ցանքի արտասովոր պակասութիւն ունեցան։ Արդէն անցեալ տարիէն ցանքի պակասութիւն կար։ Գարնան այս գաւառի բողոքաններու շրջանակը սերմի դրամ էր բաշխեր, որ սերմ գնեն և „կիսրար“ ցանեն և արդիւնքը կիսեն շրջանակին հետ։ Այժմ բողոքականները տեսնելով հունձքի հետևանքը՝ յօժարակամ հրաժարեր են „կիսրարութենէն“ և իրենց տուած սերմի դրամը կը պահանջեն. բայց տուող չիկայ. ի՞նչպէս և ո՞ւրկից տալ։ Շատ շատերը այդ դրամով գարնան ոչ թէ սերմ են ցաներ, այլ իրենց սովամահ գոյութիւնը քարշ են տուեր մինչև հունձք։ Ատիկա պատճառ համարելու է, որ շատ շատերը այդ դրամը իբրև „պախշիշ“ են ընդուներ և երբէք ալ չեն հաշուեր և չը պիտի հաշուին այն մտքի հետ թէ վերադարձնելու են։ Թերևս այս է պատճառը, որ բողոքականներու շրջանակն ալ դիմեր է տաճիկ կառավարութեան յատուկ գանձման սիստէմին—զապթիյէներու բռնութեան միջոցին։ Մի քանի տեղեր արդէն բռնութեան դէպքեր տեղի ունեցան ինչպէս Պլթից գիւղը և այլն։

Մեղքը որո՞ւն է... Տարիներ առաջ այդ միսիոնարութիւններու մէջ մրցում կար. կաթոլիկ միսիոնարները դրամի ուժով ուզեցին լաւ դիրք ստեղծել և ժողովրդին մէջ համարում ձեռք բերել. այդ նպատակով ալ աջ ու ձախ դրամ ցանեցին, սկսեց ըստ երևոյթին համայնքի մեծանալը, առերևոյթ „եղբայրանալու“ գաղտնիքը պարզեցաւ, երբ դադրեցաւ դրամի բաշխումը։ Ճիշտ նոյն ժամանակէն ժողովրդի մէջ առածի ուժ ստացաւ սովորական դարձուածքը“ „փարա վար, կաթոլիկ վար, փարա եօգ, կաթոլիկ եօգ“։ Ահա, չքաւորութիւնը, տնտեսական քայքայումը ի՛նչ միջոցների ասես, որ մարդուն դիմել չի տար։

Այս տարուան պակասը կարծես լրացնելու համար է նոր տուրքի յաւելումը։ Նուփուսի վրայ աւելցուցին 35%։ Ով որ առաջ 100 դահեկան նուփուս կուտար, այժմ պէտք է տայ, և արդէն տուաւ ալ 35 դահեկան։

Ուրիշ նորութիւն մ'ևս։ Քանի մը գիւղեր—համեմատած իրենց դրացի գիւղերուն—աւելի ջանք են թափեր տարէ տարի տալու և լրացնելու իրենց տարեկան տուրքերը՝ առանց պագիյէ թողնելու և երբ ներկայիս մէջ ալ գոցեր են ներկայ տարուան տուրքերու հաշիւը՝ անոնց վրայ նոր պահանջներ են դրած, այն է՝ քանի որ բոլոր տուրքը տրուած է, պէտք է գալ տարուան տուրքի հաշուոյն բան մը տալ. ի՞նչպէս կարելի է որ գիւղը ազատ ըլլայ պարտքէն և չենթարկուի զապթիյէի

և Թահսիլտարի վայրագութիւններու — ահա այս իսկ պատճառով „Ալէլհէսապ“ (առհաշիւ) պատրւակ է, որ ոստիկանները գան նստեն, ուտեն, խմեն իրենց ցանկացածի պէս և ապա „փէշքէշ“ մը ստանալով հեռանան։

Մօտ երկու ամիս առաջ երեկոյեան մթնակոխին 10—15 հոգի զինուած կը յարձակւեն և կուզեն քշել գիւղի ոչխարները, որ գիւղի մօտ Շամիրամ գետի միւս կողմը կը մակաղէր. 5 ձիաւոր հեռուն կանգնած կը սպասեն, որ միւսները հետևակ հովիւը շրջապատեն, զայն կապեն և հօտը քշեն։ Հովիւը, կորիճ երիտասարդ մը, իսկոյն հաւար կը կանչէ և ինքն ալ ձեռք չանցնիր՝ հօտի մէջ այս և այն կողմ վազվզելով։ Բարեբախտաբար գիւղի մէջ կը գտնւի հայ ոստիկան մը, որ առնելով կառավարական մարթինի հրացանը կը հանի. հաւարի օգնութեան կ'երթայ նոյնպէս քիւրդ հերթապահը և երկուստեք կը սկսի հրացանաձգութիւնը։ Ամբողջ գիւղը՝ մարդ, կին, երեխայ վրայ կը հանին. աղմուկ, աղաղակ երկինք կը հանի։ Աւազակներու խումբը խոհեմութիւն կը համարի ձեռնթափ լինել աւարէն և ետ քաշւել։

10—15 օր վերջ գիշերամուտին Պլթինց գիւղի հայու մը գոմէն 7 տաւար կը քշեն, կը տանեն. բայց լուսաբացը մօտ լինելով չեն կրնար պարտկել, հազիւ հազ կը հասցնեն Կղզի գիւղի „Արխուվանք“ կոչւած աւերակը՝ որ կը գտնւի հիմա սարի արևելեան լանջը Քէրբըլահասան քիւրդ գիւղի վերևը։ Ցերեկով կը յաջողւի տաւարի ոտքի հետքը բռնելով՝ երթալ գտնել և վերադարձնել։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՐԻՒՆԱՀԵՂ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

ՊԱՏՃԱՌՆԵՐ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

IV

Ճանաչենք, լաւ ուսումնասիրենք մեր միջավայրը։ Դա և դրացիութեան տարրական պարտք է և պահանջ առօրեայ գործունէութեան։ Դա կեանքի ու բարօրութեան պահանջ է այն բոլոր ժողովուրդների համար, որոնք շփւում են մուսուլմանների հետ, բայց դա մի „կատէգօրիկ հրամայական“ է մանաւորապէս հայ ժողովրդի համար։ Լոկ մանկամիտ բացականչութիւններով, Թուրք պրօլետարիատին կոչեր ուղղելով, նրա ուժի և իդէալիզմի վրայ յոյսեր տածելով՝ լուծում չենք տայ արիւնոտ խնդրին։

Ո՞ւր է այն քաղաքական ալքիմիան, որի շնորհիւ կարելի լինէր արճիճի բնազդները միանգամից վերածել ոսկէ բարքերի...

Ո՞ւր էր, թէ հրապարակի վրայ լինէին միայն զուտ տնտեսական, դասակարգային կատէգօրիաներ, առանց ռասսային-հոգեբանական բազմակնճիռ պրօբլէմների։

Ո՞ւր էր, թէ իսկապէս „երկու բևեռուած դասակարգերի մրցումը“ լինէր ներկայ արհաւիրալի ճգնաժամի անուցող աղբիւրը... Բայց մենք տեսանք, որ դա մի աղաղակող անմտութիւն է միայն, մի խակ ու սիմպլիստ յայտարարութիւն, ծնունդ ամէն բան խեղաթիւրող մետաֆիզիկական բէզօնեօրութեան։ Եթէ ցեղական փակտորը այսօր մի խոշոր մեծութիւն է քաղաքակրթուած Արևմուտքում, մի ուժ, որ սօցիալիստ կուսակցութիւններն անգամ ստիպւած են հաշւի առնել իրենց պրօպագանդի, ծրագրի ու տակտիկի մէջ, —ապա այդ փակտորի ազդեցութիւնը ուղղակի եղերական է մեր միջավայրում...

Օպտիմիզմ հասարակական կեանքում լաւ բան է, իհարկէ, բայց յոռետեսութիւնը որոշ պարագաներում աւելի լաւ է։ Պէտք է իմանալ խոր թափանցել մարդկային բնութեան մանաւանդ յոռի և չարանենգ մղումների մէջ,—ասել է մի ֆրանսիացի հրապարակախօս, և լաւ է ասել։ Պէտք է սրատես հայեացքով դիտել՝ նշմարելու համար մեր նմանների, հարևանների մէջ մանաւանդ ստորը, անազնիւը։ Այդպէս է պահանջում ամենատարրական քաղաքագիտութիւնը։

Վարդագոյն հայեացքները, ջինջ հաւատն ու վստահութիւնը դէպի դրացու, թէկուզ և լծակցի, զգացումները ինքն ըստ ինքեան համակրելի ու գրաւելի են, բայց մենք կուզէինք և հազար անգամ երանի կը տայինք, որ որանից մի տարի առաջ, մեծ կատաստրոֆի նախօրեակին, հայ ժողովուրդը նուազ հաւատ տածէր դէպի Թուրք դրացու բարեացակամութիւնը և աւելի հակամէտ լինէր տեսնելու նրա մէջ չար, վտանգաւոր տրամադրութիւններ։ Անակնկալը այնքան զարհուրելի և այնքան կործանաբեր չէր լինի մեզ համար։ Մենք հազար անգամ երանի կը տայինք, որ այդ նոյն սկեպտիցիզմը, նոյն թերահաւատութիւնը դէպի դրացի Թուրքը արտայայտւէր գոնէ աղէտի բռնկումից յետոյ—ուշ, քան երբէք—Շուշու, Գանձակի և ուրիշ բազմաթիւ դէպքերից առաջ, ուր հայ ազգաբնակութիւնը այնքան չարաչար ու անմիտ կերպով զոհ գնաց իր յանցաւոր, աներևակայելի, գրեթէ չնաշխարհիկ դիւրահաւատութեան... Մի տեղ արիւնարբու Ցակայշվիլին են ներբողներ կարդում բազմաթորագիր յիշատակագիրների մէջ, մի այլ տեղ, Գանձակում, չը նայած ողբերգական պրեցեդենտներին, երկար ժամանակ մեր որոճող հասարակութիւնը չէ կարողանում վճռել՝ ժամ առաջ քաշւելու մարմնով ու գոյքով Թուրքական թաղից և հաւատում է մօլլաներին, որոնք առերես սէր են քարոզում, օրօրում, քնացնում, իսկ տակից պատրաստում են չեչտակի հարւածը.. Աղէտաւոր փաստեր, չափազանց, իրաւ է, ծանօթ, բնական մեզ յեղափոխականներիս, որ առիթ ենք ունեցել շատ անգամ արձանագրելու նոյն երևոյթը տաճկահայկական շարժման ընթացքում... Եթէ կայ մի գիծ հայ ժողովրդի հոգեբանութեան մէջ, նզովքի արժանի մի գիծ, որ ներկայ սև օրերում լցնում է մեր սիրտը անսահման դառնութեամբ, զայրոյթով ու նողկանքով,—հէնց այդ առասպելական դիւրահաւատութիւնն է, այդ անխռով ու լաւատես անտարբերութիւնը կազմակերպութեան հրահանգների և պաշտօնական յորդորների հանդէպ, տակտի, շրջահայեցութեան այդ կատարեալ բացակայութիւնը, որից և հետևում է մեր ժողովրդի սիստեմատիկօրէն անպատրաստ վիճակը, նրա արտասուելի լքումը՝ զոռ վտանգների ժամին։ Որքա՜ն դժւար է հաշտեցնել այդ բոլորը՝ հայի „ինտելիգենտ խորամանկութեան“ մասին յօրինուած, տարածւած անեկդոտների հետ...

Հեռու մնանք, ուրեմն, միամիտ ու դաւաճան օպտիմիզմից և ճգնաժամի սիմպլիստ լուծման զառանցանքներից. գէթ այժմ սկսենք զգաստ աչքով նայել մեր իրականութեան վրայ, յարմարեցնենք նրա պահանջներին մեր բոլոր ուժերը, մեր ընդհանուր, հասարակական ճիգը, մեր տակտիկան։ Երբէք չը մոռանանք, թէ ինչ „կուլտուրական“ ու էտնօգրաֆիական համայնքի հետ գործ ունինք, և եթէ օտարները, կամովին կամ տգիտութեամբ, յաճախ անտե-

սում, „ռեստաւրացիա են անում“ մեր այսօրւայ դահճի ներքին խորունկ նկարագիրը, եթէ ռուս, վրացի ու այլ ազգերի սօցիալ-դեմօկրատները—քչերը, անշուշտ—դեռ պատրանքներ ունին թուրք տարրի նկատմամբ և պատրաստ են նոյն չափով չափել նրան, հային ու միւս ժողովուրդներին,—ապա անհրաժեշտ է, գէթ ի շահ ճշմարտութեան, ուսումնասիրել մեր հարևանին, դուրս բերել նրան աշխարհի առաջ իր իսկական կերպարանքով, պատկերացնել նրան ոչ միայն իր այժմեան էպօպէի մէջ՝ պատերազմի դաշտում, յարդեայ խուրձը ձեռքում խաղացնելիս և գիւղեր ու քաղաքներ հրդեհելիս, վագրի հանդիսով դիակները յօշոտելիս, կանանց ու երեխաներին մորթոտելիս և փորոտիքները նետելիս,—այլ պատկերացնել նրան և սովորական, նորմալ ժամանակ, իր սօցիալական ինքնատիպ գծերով, իր ամենօրեայ „իդիլլիայի“ մէջ…

Սօցիօլոգիայի ուշագրաւ մի նիւթ… Նախապատմութեան մի հարուստ բեկոր, որի էական „բարեմասնութիւնները“ կը բաւէ յիշատակել ներկայ էջերում:

*

Ցեղա-կրօնական խտրութեան բարեկամ չենք և ոչ էլ ցեղերի բնածին անհաւասարութեան թէօրիայի դաւանող: Ժողովուրդների իրաւական հաւասարութեան մասին խօսելու հարկ անգամ չը կայ,—նա մի անսասան դօգմա է մեծ Յեղափոխութեան օրերից ի վեր, ինչպէս որ մարդկային անձնաւորութիւնն էլ անբռնաբարելի մի սրբութիւն է բոլոր ժամանակներում և բոլոր աշխարհագրական կէտերի վրայ: Իրաւունքի ժամանակակից փիլիսոփայութեան համեմատ՝ բոլոր մարդկային համախմբումները կոչուած են հաւասարապէս վայելելու բնութեան ու քաղաքակրթութեան բարիքները…

Այդ այդպէս լինելով հանդերձ, իրողութիւն է և այն՝ որ ժողովրդաբան-գիտնականի, էտնօլօգի առաջ մարդկութիւնը ներկայանում է իր անվերջ այլազանութեամբ, ցեղագրական տարբեր միութիւններով, որոնց յաճախ անդունդ է բաժանում,—այնքան նրանք տարբեր են իրենց բնորոշ, առանձնայատուկ ֆիզիօնօմիաներով… Յամենայն դէպս, եթէ ընդունենք, որ երկրագնդի վրայ իրօք չը կան, էութեամբ տարբեր, բարձր ու ստոր ցեղեր—մէկը ընդունակ, շարժուն ու մշտապէս առաջադիմող, միւսը անընդունակ ու յաւէտ անշարժ—այլ որ ամեն մի մարդկային համախմբում ընդունակ է որոշ, նպաստաւոր պայմաններում, վաղ թէ ուշ զարգանալ ու առաջադիմել, ապա պէտք է խոստովանենք, որ զարգանալու և առաջադիմելու այդ ընդունակութիւնը խիստ տարբեր աստիճաններ է ընդունում տարբեր ցեղերի մէջ:

Կան, իրաւ է, բազմաթիւ ցեղեր, մանր ու խոշոր, որոնք ոչ մի հնարաւորութիւն չունին ցոյց տալու իրենց այդ ընդունակութեան չափը: Ընկած հեռու քաղաքակրթութեան հորիզոններից, աշխարհագրական անբարեյաջող դիրքերի մէջ, Աֆրիկայի, Ամերիկայի և Աւստրալիայի անյայտ խորշերում՝ նրանք—Բուշմէններ ու Կաֆրներ, Պապուասներ, Հօտտենտոտներ, Էսկիմոսներ, ամեն տեսակ կարմրամորթներ ու սեւամորթներ—առիթ ու դիրութիւն չունին, այսպէս ասած, դրսևորելու իրենց ներքին, մտաւոր ու հոգեկան կարողութիւնները և յարմարւելու սօցիալական ընդհանուր էւօլիւցիայի օրէնքներին: Նրանց տալիս են „բնաժողովուրդ“ կամ բնութեան ժողովուրդ (*Naturvolk*) վիրաւորական բառով, մի բառ, որ կարծես թարգմանն է այն բոլոր տարրերի, որոնք կապարւում են՝ զուտ բիօլոգիական կեանքով ապրող այդ նախնական, գռեհիկ համայնքների աշխարհում: Քաղաքակրթութիւնը հեռաշեռէ մնում է նրանց խաղաղ նւաճման, կամ բռնի ճանապարհով… Այդ վայրենի համայնակենցաղը իր յաւիտենական անշարժութեամբ, իր քարացած նախապաշարումներով ու ֆէտիշներով՝ ոչինչ անօրմալ բան չունի իր մէջ, քանի որ հարիւրաւոր ու հազարաւոր սերունդներից ի վեր այդ բնացեղերը ապրել են հեռու կուլտուրայի շփումներից, բարձր, մշակուած հասարակութիւններից, հեռու հաղորդակցութեան գծերից, մեծ գետերից ու ծովերից, մշտապէս փակուած իրենց զուտ բնական, կօսմիքական միջավայրում, ենթակայ բիրտ ու տարերային ազդակներին… Ոչինչ զարմանալի, ոչինչ տարապայման բան չը կայ այդտեղ:

Բայց ահա մեր առջև մարդկային ընդարձակ ազդեղատներ, համախմբումներ, որոնք նոյնիսկ քաղաքակրթութեան սահմաններում ապրելով, աշխարհագրական ու ցեղագրական բարեյաջող պայմանների մէջ, մնում են երկար դարերի ընթացքում զուրկ ամեն տեսակ կուլտուրայի ու առաջադիմութեան… Ինչո՞ւ է այդպէս… Պատասխան չը կայ: Այդ էլ, անշուշտ, բնութեան առեղծուածային խաղերից մինն է, որ մարդաբանական ու հասարակական գիտութիւնը դեռ չէ թափանցել, չէ լուսաւորել: Բացասական, հակասօցիալական ուժերը—անյիշատակ ու տխուր անցեալի մի ժառանգութիւն—տիրականօրէն բանեցնում են իրենց ազդեցութիւնը և կաշկանդում, ընդերկար խափանում մարդկային այդ հօծ համախմբումների առաջադիմութեան ընթացքը:

Այդպէս են այն ցեղագրական միութիւնները—թաթար, քիւրդ, աճիկ և այլն—որոնցով հայութիւնը շրջապատուած է այսօր իր պատմական հայրենիքում:

Չը գիտենք, կա՞յ արդեօք էւօլիւցիայի ամբողջական պրօցէսի մէջ աւելի մռայլ ու վհատեցուցիչ մի դրւագ, աւելի յուսաբեկութիւն ներշնչող մի կէտ, քան այդ ահագին մարդկային զանգուածների յամառ ձգտումը՝ մնալ աւանդական անշարժութեան մէջ, փարել անցեալին, միշտ անցեալի խաւար ու բարբարոս էմբլէմներին: Ծանր ու չարաղանջ մի հարց՝ որ այսօր ընդունում է մեր, հայերիս համար առանձնապէս սուր ու տխրագին այժմէութիւն… Էւօլիւցիօնիստները, ճիշտ է, խօսում են զարգացման ժամանակաւոր կաշկանդումի մասին (*Hemmung der Entwicklung*), թէ բիօլոգիական և թէ հասարակական օրգանիզմի մէջ, բայց որ այդ կաշկանդումը այնքան դարեր տևէ և այն էլ այնպիսի զանգուածներում, որոնք շփման մէջ են աւելի բարձր, կուլտուրական համայնքների հետ—ահա թէ ինչն է սարսափելի և ապշեցուցիչ: Ի՞նչ տարբերութիւն կայ արդեօք այժմեան դրութեան և այն հօրդայական-դիւցազներգական ժամանակների մէջ՝ երբ Չինգիզխաններն ու Թամուրները քշում էին Ասիայի խորքերից իրենց նախրային լէգիօնները՝ դէպի աշխարհադղորդ նւաճումներ…

Իրենց համայնակեցութեան ու հոգեբանութեան շատ գծերով՝ հային շրջապատող մահմեդական ցեղերը վերարտադրում են մեր աչքերի առաջ սօցիօլոգիական առաջին շրջանը՝ վայրենութեան կամ բռնութեան էպօխան՝ երբ, ինչպէս ասում են, մեռելներն էին հրամայում կենդանիներին, երբ տրադիցիօնալիզմը, աւանդապաշտութիւնը, իշխում էր թեւատարած, երբ պապենական սովորութիւնների ու հաւատալիքների վիթխարի, քարացած ամբողջութիւնը կաշկանդում էր մտքի ամեն արտայայտութիւն, դատապարտելով հասարակութիւնները զուտ երամական մի գոյութեան: Յայտնի չէ, թէ երբ կը հասնի մեր դրացիների համար հասարակագիտական երկրորդ էպօխան, բռնութեան անտիպօդը, կամ, ինչպէս ասում են, „ազատ վիճաբանութեան“ շրջանը, ուր—ինչպէս բոլոր ժամանակակից քաղաքակիրթ ու կիսակիրթ ժողովուրդների մէջ—քննադատական, կրիտիքական միտքը՝ խրոխտ ու անընկճելի՝ ապստամբում է բռնաւոր ռուտինայի դէմ:

Ներկան նրանց մէջ ստորադրւում է անցեալին, ամբողջ շնչաւոր, հօմօժէն զանգուածը կրօնական խոր երկիւղածութեամբ ծունր է իջնում մեռած ֆէտիշների առաջ և կեանքի, ինքնագործունէութեան տեղ՝ մենք տեսնում ենք մի հոյլ անշարժութիւն, շաղկապուած մի անսովոր համերաշխութեան հետ՝ ցեղի, համայնքի անհատների միջև: Մի զարմանալի՜ համերաշխութիւն… Ի՞նչ ասել կուզէ, որ դա այն գիտակից, օրգանական համերաշխութիւնը չէ, որ խարիսխն է բարձր մարդկային հասարակութիւնների, դա զուտ մեքենայական մի ներդաշնակութիւն է, որ մենք տեսնում ենք իբրև օրէնք, նախնական վայրենի և ռազմասէր համայնքների մէջ: Հային շրջապատող մուսուլման ցեղերը, յիրաւի աննման համերաշխութիւն են ցոյց տալիս ջարդելու, հրդեհելու և աւերելու, երբէք շինելու, երբէք ստեղծելու գործում… Այդպէս է միշտ արտայայտւել նրանց „ցեղական հանճարը“:

Մեքենայական այդ համերաշխութիւնը իր որոշ դրական դերն է ունեցել բոլոր հօրդային համախմբումների մէջ՝ քաղաքակրթութեան արշալոյսին, երբ գոյութեան դժնդակ կռիւը եղել է սիրապետող իրողութիւնը, երբ պէտք է եղել ամէն վայրկեան պատրաստ գտնուել՝ կուռ ու կարգապահ բանակով արշաւելու թշնամու դէմ։ բայց այդ „համերաշխութիւնը“ մի անախրոնիզմ է, հասարակագիտական մի անհեթեթութիւն է մեր քաղաքակրթուած միջավայրում. նա երբէք չի լինի ազատութեան սկզբունք, այլ միայն սարկութեան, նա միշտ կը խրախուսէ երամական ոգին, ի վնաս քննականին, նա միշտ կը բարձրացնէ, միշտ հասարակական գործունէութեան գլուխ կը կոչէ ողբալի միջակութիւններ, մտաւոր ու հոգեկան ներքինիներ, որոնցով այնքան փայլում է այսօր մեր դրացի մահմեդական ժողովուրդը։

Մի զարհուրելի ա ա ա վ ի ղ մ։ Հապա կրօնը...։ Բոլոր կրօնները ըստ էութեան յեսադէմ են,—Իսլամը ասես բոլոր կրօններից սամնայեսադէմն է։ Իբրև սիրական, գերիշխող ֆակտոր վերը յիշած ժողովուրդների կեանքում՝ նա համարեա վճռական դեր ունի այդ ժողովուրդների յետախնդնց կամ „առաջադէմ“ էվոլիւցիայի մէջ... Քաղաքակրթութեան առաջադիմութեան անհրաժեշտ կրիտերիումներից մէկն էլ հէնց այն է, որ կրօնական ֆէտիշիզմը աստիճանաբար նուազում է, որ աստուածային ու կղերական բռնաւոր սիրապետութիւնը հետզհետէ կորցնում է իր հմայքը մարդկանց գիտակցութեան մէջ և տեղի է տալիս աշխարհիկ ոգու, բանականութեան հրամայական ձայնին... Այդ երևոյթն ենք դիտում ամբողջ Արևմուտքում և այն բոլոր ժողովուրդների մէջ, որոնք ուղղակի կամ անուղղակի հաղորդակից են եւրոպական քաղաքակրթութեան. . . Սակայն ահա հասարակութիւններ, ուր կրօնը իր անխուսափելի սանկցեաներով միջամտում է կեանքի բոլոր արտայայտութիւններին, ուր նա որոշադրում է քաղաքական կազմակերպութիւնների ձևը, աստուածային դրօշմ է հաղորդում ասիական ամենապժգալի բռնապետութիւններին, ուր նա միահեծան կանոնաւորում է հասարակական յարաբերութիւնները, ուղղութիւն է տալիս հաւատացեալների և՛ բարոյականին և՛ մտաւորին, ուր նա դեռ մինչև օրս էլ փառաբանում է Ղուրանի համարեա իւրաքանչիւր էջում հռչակած „արքայան պատերազմի“ սկզբունքը և ներշնչում է եկեղեցականացող, ֆանատիկոս մտաւորներին—դեռ այսօր ևս, աւաղ—այն չարաշուք համոզմունքը՝ թէ իրօք ամէն մի պատերազմ „անհաւատների“, գիաւուրների դէմ՝ աստուածահաճոյ մի գործ է, որի մէջ մեռնողները դառնում են դրախտաբնակ մարտիրոսներ, մինչդեռ պատերազմից յետ կացողները, դասալիքները մատնւում են դժոխքի արհաւիրքներին... Մի կրօն, որ ցեղի պէս քարացել է, որ ոչ մի էվոլիւցիա, ոչ մի բարենորոգում չէ կրել իր ծագման օրերից ի վեր, չը նայած ներքին հերձուածներին ու պայքարներին, որ չէ յարմարուել մարդկային պատմութեան ոչ մի նշանաւոր անցքի, որ երբէք չէ նպաստաւորել դէմոկրատիզմի, ռամկավարութեան ձգտումները, որ միշտ միայն խրախուսել է բռնի աշխարհակալութիւնները հրով ու սրով, թալանի և սպանութեան քաղաքականութիւնը.. Որքան էլ ճչան և հաւատացնեն Իսլամի խանդավառ երկրպագուները, որքան էլ Էրիատաբդ թաթարներն ու տաճիկները ճառեն Իսլամի իբր-ազատամիտ տենդենցիաների, նրա լայն համբերողութեան մասին՝ անժխտելի է, որ այդ կրօնը իր ծայրայեղ դոգմատիզմով, անօրինակ, մի անգամ ընդմիշտ բիւրեղացած կրօնա-բարոյական ռէգլամենտացիայով՝ մի սարսափելի պատիժ է ոչ միայն „անհաւատների“, այլ և հաւատացեալների համար, մի ուժ, որ անագորոյն բռնութեամբ ճզմում է ամէն ինչ, սարկացնում է վիթխարի զանգուածներ, ստեղծում է մի ջոկ, առանձնայատուկ ուղեղային դրութիւն, տափակացնում է առանց այն էլ խեղճ, սոխրագոյն, բուսական մի կեանք. . .

Եւ միթէ՞ մտամբ այդ թունաւոր ազդեցութեան չենք պարտ՝ որ մեր դրացիները մինչև օրս էլ շարունակում են դեգերել նոյն թանձրամած, նախապատմական ոգիտութեան մէջ, որ սերունդների մի հսկայական շարք է անցել և ըստ երևոյթին դեռ պիտի անցնի, առանց օգուտը քաղաքակրթութեան լոյսից և բարիքներից, անընդունակ՝ զարգացնելու իրենց մէջ գիտութեան, արուեստի, գրականութեան հեռաւոր նմանութիւններն անգամ։ Այդպէս է և տաճիկ ժողովուրդը, այդպէս է ամբողջ Օսմանեան պետութիւնը, որ չը նայած իր նպաստաւոր աշխարհագրական դիրքին և իր մշանջենական շփման լուսաւոր աշխարհի հետ, հարիւրաւոր տարիների ընթացքում մնում է Եւրոպայի դռների մօտ՝ մի երկրորդ Չինաստան, աւելի ևս յետադէմ,— Չինաստանը անհամեմատ աւելի սիրով է դիմաւորում եւրոպական կուլտուրային։

Որքա՜ն, դժբախտաբար, իրաւացի է Հեգելեան Կանտը, երբ նա ասում է թէ „Իսլամը լոկ յեղաշրջումն է տարածութեան մէջ և ոչ ժամանակի (eine Umwälzung im Raume. nicht in der Zeit), քանի որ նա իր դասական աբստրակցիայի, վերացականութեան մէջ չէ պարունակում որևէ ազդ ու հնարաւորութիւն՝ հեռաւոր զարգացման համար։“ Ասես ճակատագրի, ֆատումի մի նզովք հալածում է միշտ այդ թշուառ ժողովուրդներին, հասարակական այդ մեծածաւալ մարմիններին, որոնց անդամները, կարելի է ասել, ամէն տեղ են, իսկ գլուխը, մտածողը, գիտակից օրգանը—ոչ մի տեղ... Ցեղի ու կրօնի տարկանոնութիւնները—երկու աշխարհիջիջ պատուհաններ—սերտ դաշնակցած՝ ուխտել են կարծես մինչև վերջ մաքառել քաղաքակրթութեան հզօր ու համոզիչ ճառագայթների դէմ...

*

Ամէն մի ցեղի, ժողովրդի մէջ միշտ մի աննշան փոքրամասնութիւն է, ընտիրների՝ մի դասակարգ է, որ ներկայացնում է առաջադիմական տարր, որ պայքարում է անցեալի դէմ, ապագայի համար։ Ո՞ւր է այդ տարրը մահմեդական աշխարհում.. Այնտեղ է ս ա ֆ ի ա ն՝ ասես յանդել է միայն բ ա ց ա ս ա կ ա ն հեռանքների... Զարմանալի՞ է արդեօք... Դարեր շարունակ ներհեղուց յետոյ, մեր հարևան թուրք ժողովուրդը այսօր ահա „սթափման“ նշաններ է ցոյց տալիս յանձին իր փոքրաթիւ „գիտակից տարրի“, „ինտելիգենցիայի“—և ի՞նչ է արտադրում այդ „ինտելիգենցիան“...

Փորձո՞ւմ է նա—տիեզերական „Նմանողութեան Օրէնքով“—փոխառնել բարձր ազգերից կուլտուրայի նուաճումները։ Փորձո՞ւմ է դէթ մասամբ թօթափել Իսլամի և հարազատ, իներտ հասարակութեան բթացնող լուծը, ուզո՞ւմ է արդեգրել ինքնաքննադատութեան ու ինքնամտրակման բեղմնաւոր մեթոդը, որ դրացի հայը վաղուց իվեր կիրառում է իր կեանքում այնքան բուռն նախանձախնդրութեամբ ու այնքան աջողութեամբ։

Փորձո՞ւմ է նա քայլել համամարդկային ազատագրութեան ճանապարհով, փոքր ինչ մարզել գաղափարական անձնազոհութեան մեծ դպրոցում, ուր յեղափոխական հայը 20 տարուց իվեր վաստակել է մարտիրոսութեան այնքան պսակներ, երբեմն էլ յաղթութեան դափներ...

Ո՛չ, նա հանդիսաւոր կերպով, իր ամուլի էջերում ու փոխարքայական պալատում՝ պարտաւանք է ուղղում ցեղափոխութեան և մերժում է ազատագրութեան սկզբունքը։ Նա միւս կողմից հրապարակ է նետում պ ա ն ի ս լ ա մ ի զ մ ի դրօշակի տակ և այն էլ՝ յարձակողական, թալանող ու յօշոտող պանիսլամիզմի*)։ Նա գեռնատարած փրոֆեսիոնալ ամբոխի գաղափարն ուրոշ դեր ունի նեղիայ թուրքական արտաքնի եւ մասնաւորապէս նրա շէմերի նեղիին մրդումների մէջ—տարակոյս չը կայ։ Բայց որքա՞ն մեծ է այդ դերը։ Որքա՞ն նիշտ է այն ենթադրութիւնը՝ թէ հայակործան արտաքնը, իբրեւ մէկ մասը նախամտածուած քաղաքական մի ծրագրի, նեռնչուած ու կազմակերպուած է Բոսֆորի ափերից, թէ Կովկասեան թուրք *état-major*-ը ուղղակի յարաբերութեան մէջ է երկրզական շրջանների հետ, ինչպէս այդ հաստատել է ուզում Մազօնեն Այշին „Սին Օտեչեսվա“-ի անցեալ տարւայ 209 համարում հրատարակած իր Կ. Պոլսեան խորհրդաւոր թղթակցութեան մէջ. թէ սուլթանի կառավարութիւնը նրպատակ է ունեցել—օգտւելով Ռուսաստանի պարտութիւններից Մանջուրիայում, նրա զինուորական ուժի անկումից եւ ներքին յարատեւ խռովութիւններից—ապստամբեցնել Կովկասեան միլիոնաւոր մահմեդականներին եւ խիզախ ոստիւնով շանթել աւանդական, երդւեալ թշնամուն, յափշտակել Կովկասի մի մասը...

Այդ հիպոթէզը իմ՝ին անհիմն չէ եւ անհաւանական չէ։ Ապա-

ւում է Երզրումի մեծ Մարդասպանի առաջ և արդարացնելով նրա արիւնոտ սխրագործութիւնները, պատրաստակամութիւն է յայտնում ներշնչելու նրա փայփայած մեթոդից և գործադրելու այն նաև Կովկասում՝ նոյն „ըմբոստ“ ու ատելի Հայ-գեավուրի դէմ...

Եւ փաղիշահական մեթոդը գործադրւում է... հէնց այն ժամանակ, երբ հին ռէժիմը փլատակւում է ի դէմս ամենամեծ ու դժնդակ բռնակալութեան, երբ Ռուսաստանի և Կովկասի բոլոր ժողովուրդները, յանձին իրենց առաջադէմ տարրերի, զինւած գիտութեան վերջին խօսքով, տոգորւած հասարակական նոր իդէալներով, դեմառերում են իրենց սեփական արիւնով ներկւած ազատութեան արշալոյսին— թուրք „ինտելիգենցիան“, իր ժողովրդի գլուխ կանգնած, նրա կեղեքիչ տարրերի՝ բէկերի ու մոլլաների հետ ձեռք ձեռքի տւած, հանդիսանում է բէակցիայի և խուլիգանութեան մի հզօր պատնէշ, ապաւինում է հզօր ու աշխարհիկ բռնակալութեան։ Այդպէս է ահա արտայայտւում ինքնատիպ, *sui generis* հոգեբանութիւնը։ Նոր „սթափւող“ ժողովրդի „դիտակից“ տարրը որոնում է իր ժողովրդի փրկութեան խարիսխը դարձեալ անցեալի փէտիշների մէջ. փոխանակ հետևելու, ընդօրինակելու առաջադէմ ազգերին՝ նա գնում է լուսաւորելու Երզրումի ճիւղի մօտ... „Նմանողութեան Օրէնքը“, քաղաքակրթութեան տարածման այդ նշանաւոր ֆակտորը՝ այդպիսով թարսւում է, գլխիվայր դրւում և նրա կրողքրմապետները իրենց հետ միասին՝ նախապատմական բարբարոսութեան անդունդն են գլորում և իրենց հարազատ ժողովրդին...

Կուլտուրոյի, թէ բնութեա՞ն ժողովուրդ։ *Kulturvolk թէ՞ Naturvolk...*

Ինտելիգենցիա չէր կա՞, անհատներ չէր կան... թւում է թէ պէտք է ամբողջ ժամանակակից Իսլամականութեան խորագոյն ցաւը։ Չէ՞ կայ այն տարրը, որ ազն է բոլոր քաղաքակրթւող հասարակութիւնների, որ կրողն ու ազդարարն է նոր գաղափարների ու հոսանքների, չէ՞ կայ առհասարակ հասարակական մտքի շերտաւորում, չէ՞ կայ այլազանութիւն գաղափարների, մտքի, աշխարհայեցողութեան մէջ։ Տնտեսական-դասակարգային շերտաւորումը

զան թերեւս կը ստուգէ իրողութիւնը իր ամբողջ ծաւալով եւ ցոյց կը տայ, թէ որքան պանիսլամիզմի առանձին արտայայտութիւններ եւ որոշ փասեերը—ինչպէս, օրինակ, գաղտնի խորհրդաւոր քարոզիչների երեւան գալը Բագուում ու այլ տեղերում, կանաչ դրօշակները, այլ եւ մակազրութիւններով—ասպացոյցներ են մի հոյակապ բաղմական ծրագրի՝ համիսլամական նշանաբանի տակ՝ որը տարամբաւնօրէն եւ էապէս պիտի ունենար նակտրիսոնէական բնաւորութիւն, բայց որ ուղղւած է,—խորամանկութեա՞մբ արդեօք—միմիայն հայ տարրի դէմ եւ մինչեւ օրս արձագանգ չէ գտնում օսմանեան մահմէդականութեան զօրեղ սլաւտարի՝ կովկասեան սիւնի ազգաբնակութեան մէջ...

Ինչ որ էլ լինի, համիսլամական գաղափարը իր բաղմական կամ կրօնա-փիլիսոփայական իմաստով *à priori* աւելի մատչելի է թուրք մասսաների ու առաջնորդների ըմբռնումներին եւ այդ գաղափարի դերը հաստատած ողբերգութեան մէջ աւելի հասկանալի է, քան հայի տնտեսական, „դասակարգային նշանակութիւններից“ իբր առաջացած անտագոնիզմը եւ բոլոր „իզմ“-երը, որոնք խոպան ուղեղների բանդագուշանք են միայն։

Իսլամի տարիցեաների համեմատ՝ ներկայ „սրբազան պատերազմում“ եւս մահմէդականների յաղթական բանակը տեղ-տեղ սխալում էր գերի ընկած հայ „գիավուրներին“ — Բաղտալու, Մինիհնոյ—կրօնափոխ լինել եւ այդ դէպքում նրանց կեանքը խնայւում ու յարգւում էր... Նման դէպքեր յանախ են դիտւել եւ տանկահայոց կոտորածների միջոցին։ Այդ հանգամանքը ինքնին մի խոշոր ապացոյց է կրօնական ֆակտորի անագին, ծանրակշիռ կարեւորութեան։ Կրօնական ֆանատիկոսութիւնը յանախ բռնկւում է միանգամայն ի վնաս յարձակողի տնտեսական շահերին... Բրօնիկական լարւած վիճակը երկու դրացի համայնքների միջեւ, շարունակական ընդհարումները՝ հարւածում են առեւտրական յարաբերութիւններին, թունաւորում են տնտեսական կեանքը, սահմանափակում կամ խլում կաշանդում են ապրանքների փոխանակութիւնը եւ այդ բոլորը կորստաբեր է երկու պատերազմող կողմերի ե՛ւ բուրժուային ու ֆէօդալին ե՛ւ գիւղացուն ու պրոլետարին...

կարծես նոյնպէս բիւրեղացել է ցեղի, կրօնի և բոլոր միւս կատեգորիաների նման, նա չէ անդրադառնում մարդկանց մարերի ու զգացումների վրայ.—այն ազբերդական, սեթշառութիւնը, որի մէջ դարերով պահում են թուրք մասսաներին՝ համակրօն ֆէօդալները, կղերական կատաղ և աշխարհիկ բռնապետութիւնը՝ ոչինչ չէ տալիս թուրք „կրթւած“ դասին, նա չէ արտադրում ժողովրդական դատի ճշմարիտ, համոզւած առաջամարտիկներ ու իդէալներ. այն արհարարի և բնաջնջող պատերազմն անգամ, որ թուրք տարրի յղացումն է, որ այսօր ներկել է ամբողջ Անդրկովկասը և՛ հայի և՛ թուրքի արիւնով,—այդ եղակի ճգնաժամն անգամ հանդէս չէ բերում թուրք ժողովրդի միջից դէթ մի փոքրաթիւ բանակ՝ կարող, ազդեցիկ ու դաշափարական անհատների, որոնք գիտակցելով ընդհարումի բոլոր դժոխային անմոռութիւնն ու սարսափները, աշխատեին, ուժգին, որոտուն բողոքով, եռանդուն քարոզներով կանգնեցնել հարազատ ամբոխի կոյր, տարերային ալեցքը *)։

Անհատներ չը կա՞ն։ Ռէժիմներն անգամ ենթարկւում են, յարմարւում են իրենց շրջապատին։ Բիրա ու քնական միջավայրը, որ ինչպէս տեսանք, կազմւած է հինաւուրց նախապաշարմունքներից, նեխւած բարքերից ու սովորութիւններից, պահանջում է իւրաքանչիւրից հլու, դիակնային համակերպում, *perinde ac cadaver*։ Անհատները յարմարւում են իսպառ, կորցնելով իրենց առանձնայատուկ գոյներ և գունաւորելով շրջապատի նման... Այդպէս շնչաւոր տիպերի մէջ, որոշ կենդանիներ ու բոյսեր ընդունում են շրջապատող բնութեան գոյնն ու յատկութիւնները, որպէսզի հակասութիւն չը կազմեն միջավայրի հետ,

*) Կը մեղադրե՞ն մեզ արդեօք, թէ շատ նեղ խտացնում գոյները։ Բայց մի՞թէ որեւէ մէկը կարող է պնդել, թէ այդ բանակը կայ, թէ նա գործում է պատշաճ լրջութեամբ ու հեղինակութեամբ, թէ միայն մենք ենք, որ ուռճացնում ենք նրա գոյութիւնը... Մի՞թէ կը պահանջէ՞ ոգեւորել այն հանգամանքով՝ որ հրապարակի վրայ կայ նորերս կազմակերպւած „Սէդայէ Միլլէթ“ (թուրք ռամկավարական կուսակցութիւն) կոչւող մի մարմին, որ կան թուրք սոցիալ-դէմոկրատներ ու յեղափոխականներ... Մենք ողջունում ենք այդ տարրերի երեւան գալը, բանի որ, այսպէս թէ այնպէս, նրանք թուրք ժողովրդի ապագան են ներկայացնում. բայց զարգացման խանձարուրի մէջ գտնւող այդ ուժերը այնքան անուշ ու անկայուն են, որ նրանց ձայնը, եթէ անգամ ինչէ խրոխտ ու ազնիւ, պիտի մարէ հայրենի խուլիգանութեան յարուցած մոռի մէջ։ „Եթէ միայն ինչէ խրոխտ ու ազնիւ“... Այստեղ եւս անխուսափելի ռեզերվ։ „Ճառաց“-ի 15-րդ համարում կարդում ենք մի բաղւած Բագւի մահմէդական իբր-սոցիալ-դեմոկրատ „Իրշադ“-ից, ուր թուրք հրապարակախօսը հռչակում է „Իսլամութեան մէջ եղող թուրքական ազնւութիւնը, նրա մաքուր բնաւորութիւնը“ եւ կատաղութեամբ տանջեր է թափում „Դեհենի զաւակ հայերի“ ու „Դաշնակցութեան“ վրայ, որոնք յանդգնում են „ամբաստանել, արատաւորել Գանձակի մուսուլմաններին“... Մեկնութիւններ աւելորդ են։ Իսկական, ազնիւ թուրք գործիչին հարկաւոր է ներկայ հանգամանքներում, բաղաքացիական բաւականաչափ արիութիւն՝ հրապարակով ըմբոստանալու թուրք *état major*-ի տանտակութիւնների դէմ, եւ խարանելու ամենին ծանօթ ոճրագործներին, „պատասխանատուներին“։ Ե՞րբ արդեօք կը գայ այդ արիութիւնը... Երբ որ երկու ժողովուրդներն էլ իրարու բզկտելով՝ կը սպառւի՞ն...

Փոքրիկ, բայց քնորոշ փաստ.

Անա մի թուրք ինտելիգենտ, համալսարանական—յանկարծակի „Դրօշակի“ խմբագրատան։ Նա այն վայրերից է, ուր թուրք ու հայ ապրում են միասին, սեւար բազմութեամբ եւ ուր նրանք մի տարուց ի վեր կրծում են իրար։ Որոշ նշաններից տեղեկանում ենք, որ մեր հիւրը հաստատապէս լաւերից է, „կիսակիցներից“։ Նա խօսում է իր խաղաղարար ուշադրութեան մասին՝ երկրի մէջ։ Հանելի իրողութիւն։ Նա յայտնում է, թէ փախել է իր կրօնակիցների հալածանքից, վրէժխնդրութիւնից։ Հիասթափութիւն։ Բայց նեստորական ոգեւ յեռոյ վրէժխնդրութիւնից։ Հիասթափութիւն։ Բայց նեստորական ոգեւ է գալիս։ Մեր թուրք համալսարանականը աւելացնում է, որ ինքը է գալիս։ Մեր թուրք համալսարանականը աւելացնում է, որ ինքը մինչեւ օրս էլ չէ կարողացել հասկանալ՝ թէ ո՞վ է, ի՞նչ է թուրքհայկական արիւնեղութիւնները։ Դրդողը եւ թէ երկու կռւող կողմերից ո՞րն է մեղաւոր... Այդ ինտելիգենտ երիտասարդը, ինչպէս եւ վերը յիշած „ազատախոհ“ հրապարակախօսը՝ մի մի նմուշ են ցեղի յատուկ հոգեբանութեան...

ուշադրութիւն չը դրաւեն իրենց վրայ և դիւրութեամբ պաշտպանեն իրենց դիրքը գոյութեան դժուարին պայքարի մէջ։ Նմանութիւնը կատարեալ է...

Զարհուրելի է սովորութիւնների, բարքերի լուծը։ Անհատը ստիպուած է մ տ ա ծ ե լ ծնող-երամի գլխով, զ գ ա լ ու կ ա մ ե ն ա լ՝ նրա սրտով ու կամքով... Մի փաստ օրէնք՝ որ արտայայտւում է Իսլամի գրեթէ ամբողջ աշխարհագրական գօտու վրայ... „Երիտասարդ Թաթարները“ և „Երիտասարդ տաճիկները“—Ահմէդ Աղայեւներն ու Ահմէդ Րիզաները—նոյն թաթարական և տաճկական ոգին են մարմնացնում, նոյն հոգեբանութիւնն են արտայայտում՝ իրենց ցեղերի բացասական գծերը. բոլորն էլ պանիսլամիստ ու ազգայնամոլ, յետադէմ ու արքայապաշտ, բոլորն էլ ատող ու հակառակորդ ուրիշ, լծակից ազգութիւնների, նրանց պարզած ազատութեան դրօշակների, նրանց դաւանած իդէալների։ „Երիտասարդ“ տաճկութիւնը, Օսմանեան պրօգրէսի դրօշակակիրը, չը նայած իր ընդունած բարձրագոչ նշանաբաններին՝ մնաց երեսուն տարուայ իր գոյութեան ընթացքում ցեղի պէս ամուլ ու անդամալոյծ,—մի կուսակցութիւն, կազմուած մասամբ միջակութիւններից և բարոյական գաճաճներից, որոնք, գաղափարական անհրաժեշտ շաղախից զուրկ լինելով, յեղափոխութեան վարդապետութիւնը հարեմներում ու սուլթանական ախոռատներում սովորելով, սիստեմատիկաբար դաւաճանեցին իրենց դատին, կաշառուեցին օգոստափառ Ոճրագործից, և իբրև անօրինակ, իրենց տեսակի մէջ եզակի „յեղափոխական“ մի կուսակցութիւն՝ նրանք զզուանք ու զայրոյթ միայն առաջացրին ամբողջ յեղափոխական մարդկութեան մէջ...

Նրանց սիրած զբաղմունքներից մէկն է եղել՝ ամբաստանել ու արտաքսել յաչս օտարների՝ հայ ու մակեդոնական ժողովրդի ազատագրական շարժումները, ժխտել միջազգային դաշնագրերով ընդունուած յանձնառութիւնները՝ յատկապէս հայերի ու մակեդոնացիների համար, յորդորել վերջիններին՝ օսմանցի դառնալ և մոռանալ ընդհանուր, օսմանեան հայրենիքի ազատագրութեան մասին... իրենց եղանակով։ Սուլթանի արիւնռուշտ քաղաքականութիւնը հայերի վերաբերմամբ, տաճկական եաթաղանի տակ ընկած հարիւր հազարաւոր զոհերը երբեք չեն վշտացրել „կարգի ու առաջադիմութեան ներկայացուցիչ“ Ե ր ի տ ա ս ա ր դ Տ ա ճ ի կ ն ե ր ի ն,—ընդհակառակը... Այդպէս է ահա պատկերանում մեր առջև, իր խոշոր ու հարազատ գծերով, Օսմանեան վերածնութեան „ավանգարդը“։ Մեռելածին մի կուսակցութիւն, ծոյլ, անպտուղ, առանց անցեալի ու ներկայի... Նրա հետ կարծես կօնտրաստ է կազմում Անդրկովկասեան Ե ր ի տ ա ս ա ր դ Թ ո ւ ր ք ո ւ թ ի ւ ն ը, որ այսօր բռնած է տենդոտ, մրրկալի պայքարներով և հասած „փառքի“ գագաթնակէտին... Սակայն, արտաքուստ հակառակ՝ ներքուստ խորապէս նման են իսլամական երկու „ավանգարդ“-հատուածները,—երկուսն էլ զոհ նոյն ճակատագրի ու ատավիզմի, երկուսն էլ ծնունդ նոյն դարվինական յ ա ր մ ա ր ե ց մ ա ն՝ իրենց նեխուած իրականութեան, ռուտինային. երկուսն էլ— Անկում ու Այլասեռում...

Ո՞ւր է ելքը։ Ո՞վ պիտի փշրէ ռուտինայի անտանելի ապառաժը։ Ո՞ւր են բարձր, անկախ հոգիները, որոնք հեռու երամ-զանգուածի ազդեցութիւններից, անդրջրհեղեան, փթած հասկացողութիւններից՝ որոճան բարձր, քաղաքակիրթ հասարակութիւնների ծանուցած ճշմարտութիւնները և աշխատեն իրագործել նրանց՝ հարազատ միջավայրում։ Ո՞ւր են արտակարգ տեմպերամենտները, որ իրենական հզօր ու արգասաւոր մ ե կ ո ւ ս ա ց մ ա ն մէջ պատերազմ յայտարարեն բռնաւոր, աւանդապաշտ հասարակութեան և դառնան խըթան նրա անսայթաք առաջադիմութեան։

Անցեալը և ներկան, չէ՞, որոշ չափով պատասխանում են ա պ ա գ ա յ ի համար... Վաղը, ոչ հեռու ապագայում, մեր երկիրը յուսով ենք կը մտնէ ազատ կարգերի մէջ.—ընտրողական իրաւունք՝ ընդարձակ ու հաւասար բոլորի համար՝ մամուլի, խօսքի ազատութիւն, պարլամենտական կեանք և այլն—և ի՞նչ պիտի տայ Թուրքական ահռելի անշարժութիւնը այդպիսի կարգերի մէջ... Ի՞նչ ուրիշ բարիք կարող է արտադրել նա, բայց եթէ սանձարձակ օլիգարխիա և դէմագոգիա (dēmagogie), ուր—ինչպէս Հիւսիսային Ամերիկայում, սեւամորթների ազատագրումից յետոյ—ըլերշ, անսկզբունք դէմագօգները, պօլիտիկանները (հէնց այսօրուան Թուրք խուլիգանութեան „ինտելիգենտ“ շէֆերը), օգտուելով իրենց ժողովրդի անծայր տգիտութիւնից՝ ագռաւների պէս կը թափուին նրա վրայ, կ'աշխատեն իրենց գձուձ շահերին ծառայեցնել նրա թ ո ւ ա կ ա ն ո ւ ժ ը, նրա վրայ հիմնել ազդեցութիւն ու արտօնութիւններ. կ'աճի քաղաքական կաշառակերութիւնը հրէշաւոր չափերով, ռամկավարութեան մթնոլորտը կը թունաւորէ, կ'ապականէ, և դեռ երկար, շատ երկար ժամանակ, նոյնիսկ դէմօկրատիզմի յաղթանակից յետոյ, Թուրքական կամարիլլան իր ձեռքում կ'պահէ իներտ ու հլու մասսաները, և այդ բոլորը, բնականաբար, կ'անդրադառնայ նաև հայ ժողովրդի ճակատագրի վրայ... Հրապուրիչ է հեռանկարը—ի՞նչ ասել կուզէ...

(Վերջը միւս անգամ)

ՀԱՅ—ԹՐՔԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

I

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԴԷՊՔԵՐԸ

(Հատուածներ մի ընկերոջ նկարագրութիւնից *)

ԹԻՖԼԻՍ, դեկտեմբերի 6

... Նոր Թիֆլիս հասած, անձամբ տեսանք թէ ի՛նչ է նշանակում վախեցած ամբոխ։ Լսեց մի որոտ, յետոյ հրացանների երկու տրաքոց. տրամվայների, կառքերի և ձիաւորների մի խելակորոյս փախուստ էր, որ սկսուեց։ Տեսարանը աննկարագրելի էր։ Մի ժամ յետոյ քաղաքը հանդարտուեց, և պարզուեց, որ տրամվայի տակ մի չարամիտ դրել էր „պետարդ“. Նրա պայթիւնի վրայ շշկլած զինւոր պահակները պատի առաջ սկսել են հրացաններ արձակել օդի մէջ և ահա այդ ահռելի երկիւղը ու փախուստը։

Սա դեռ երկունքի սկիզբն էր։

Երկրորդ օրը, նոյեմբերի 18-ին, Թիֆլիսում նախ անորոշ կերպով, ապա աւելի և աւելի վճռական ձևով լուր տարածուեց, որ Գանձակում հայերի ջարդ է տեղի ունեցել։ Տարաբախտաբար պատ-հեռագրատան գործադուլը հնար չէր տալիս ճշտելու։ Շուտով երկաթուղով եկողները և փախչողները եկան պատմելու սոսկալի ճշմարտութիւնը։ Չը նայելով հայերի պատրաստութեան, չը նայելով անցած այնքան օրինակներին, մեր խելացի հայրենակիցները այստեղ էլ խաբուել, վստահացել են Թուրք ոստիկանապետի և Տակայշվիլի կոչուած սրիկայի հաւաստիացումներին և զոհ գնացել մի արիւնոտ դաւադրութեան։ Այստեղ էլ կատարուեց նոյնը, ինչ որ Նախիջևանում—Թուրքաց մասում գտնուող հայոց ամբողջ շուկան թալանի, աւերի և հրդեհի ենթարկուեց նշանակուած ժամին. կոտորածը սարսափելի է եղել խանութների մէջ։ Բայրամի օրն էր, Թուրքերը մզկիթից դուրս են գալիս խումբ-խումբ և ամենաբարեմիտ եղանակով մտնում են հայերի խանութները զոյգ-զոյգ, երեք-երեք, իբր թէ խօսելու և առևտուր անելու համար։ Որոշեալ նըշանով, նոյն վայրկենին համարեա, սկսւում է կոտորածը, շատերին մորթում են հէնց իրենց խանութների մէջ։ Քչերըն են ազատւում. ապա սկսւում է թալանն ու հրդեհը։ Վնասը միլիոնի է հասնում։ Սպանուածների թիւը 100-ից աւելի է։ Այդ այն շուկան էր, որ մի քանի անգամ հայերը փորձեցին փոխադրել իրենց մասը և միշտ Թիւրք ոստիկանապետի և մի քանի բէգերի խորհրդով փոխեցին իրենց որոշումը ու մնացին։ Գեներալ Տակայշվիլին ներկայ է եղել և այս ոճրագործը վարուել է ճիշտ այնպէս, ինչպէս Նակաշիձէն Բագւում։ Զօրքը ոչինչ չի արել, և Թիւրքերի գազանութիւնը սահման չի ունեցել։ Ուշքի եկած հայերը և Դաշնակցական կռւողները շտապ-շտապ կազմակերպուել և ոտքի են ելել։ Քաղաքը բաժանուել է երկու մասի և Թուր-

*) Այս նամակը, գործադուլի պատճառով, հասաւ մեզ փետրուարին միայն։

քերի բոլոր ջանքերը խուժել հայոց թաղը վերջացել է առաջինների կոտորածով։ Կուին մասնակցել է հոչակաւոր աւազակապետ Դալի-Ալին 500 ձիաւորներով, բայց դարձեալ յետ է մղել հայերից մեծ կորուստներով։ Այս այն աւազակապետն է, որին ընդունել էր բարեկամական ունկնդրութեան Սուլթան-Կրիմ-Գիրեյը. Գանձակին օգնութեան են գնացել էլի մի քանի Դաշնակցական խմբեր։ Օգնութեան էին եկել նաև շրջակայ հայ գիւղերից։ Այսպէս միահամուռ ջանքերով կարելի եղաւ թուրք խուժանի առաջը փակել և նոյնիսկ զգալի վնաս հասցնել։ Կռիւը շարունակւեց 4—5 օր, և մինչև այսօր էլ հաշտութիւնը չի կայացել. հայերը մերժում են թուրքերի առաջարկը և պահանջում են երկու միլիոն վնաս։ Մալման էլ գնաց հաշտեցնելու և վերադարձաւ առանց հեռանքի հասնելու։ Այժմ այդ երկու բանակները կանգնած են դէմ առ դէմ, յարաբերութիւնն իսպառ կտրուած է երկու մասի մէջ, հայերը ապրում են իրենց ուրոյն կեանքով և թուրքերը իրենց։ Միայն կայարանը սկզբից մինչև այժմ Դաշնակցական խմբի ձեռքին էր և թուրքերի բոլոր ջանքերը քշել նրանց այնտեղից, անցել է անյաջող. եթէ այդ յաջողւի նրանց, հայերի բանը շատ կը վատանայ, որովհետև պաշարի դիծը կ'ընդհատւի։ Սպասւում է նոր և աւելի ահեղ ընդհարում։ Մօտ 4000 թուրք կայ զէնքի տակ քաղաքում և 1500 հայ։

Գանձակի դէպքից յետոյ այլևս անկարելի էր պահել Ցակոյշվիլուն, որի գիւղական ամբողջ ծրագիրը երևան եկաւ, ուստի Վրօնցով-Դաշկովը վերջապէս հնարաւոր համարեց նրան „ետ կանչել, միսիան լաւ ի կատար ածելուց յետոյ, և նրա տեղ նշանակեց գեներալ Ֆլէյշերին։ Վերջինս սկզբում մի փոքր լաւ դիրք բռնեց, բայց այժմ դարձեալ հայերի դէմ է. էլ կասկած լինել չի կարող, որ կաշառւել է։ „Ատեղաշարդ" գեներալից ուրիշ առաքինութիւն սպասել անհնարին է։

Գանձակի ընդհարման լուրը Թիֆլիս հասնելուն պէս, այստեղ էլ թուրքերի մէջ խլրտում նկատւեց։ Այլասերւածների այս քաղաքը, ուր 70 հազար հայ կայ 10 հազար թուրքի դէմ, ժողովուրդը դողում էր այդ մի բուռն խաթաբներից։ Դաշնակցական խմբերը թուրքերի խաղը շրջապատեցին և դիրքեր գրաւեցին։ Մի երկու օր այդպէս մնացին դէմ առ դէմ։ Կառավարութիւնը թոյլ էր տալիս երկու կողմին էլ։ Պէտք էր տեսնել Դաշնակցական խմբերին առանձին նշանները կրծքերին կպցրած և այնպէս կամ Մաուզերը ձեռներին փողոցներով անցնելիս... Նոյեմբերի 20-ին առաջին պայթիւնը լուեց թուրքերի կողմից, և սկսւեց միահամուռ ոռոտ բոլոր դիրքերից։ Մի կատաղեալ պատերազմ։ Բարրիկադներ շինւեցին փողոցների բերաններում։ Դրութիւնը ծանր էր։ Պարզ էր, սակայն, որ թուրքերը սատիկ ընկճւած էին։ Նրանց կորուստներն ահագին եղան. սպանւեցին, ցաւ է ասել շատ պարկեշտ տակ խեղճ ու կրակ համշարիներ։ Սկսած կռիւը մերթ դադարելով, մերթ հանդարտւելով տևեց ամբողջ շաբաթ, որի ընթացքում բազմաթիւ մանր ու մեծ էպիզոդներ տեղի ունեցան, բայց ես զանց կ'առնեմ։ Ասեմ միայն, որ Դաշնակցական խմբերի ընթացքը, կազմը ընդհանուր հիացմունքի առարկայ եղաւ։

Առաջին օրերը հրացանների որոտից սարսափած ժողովուրդը կամաց-կամաց խաղաղւեց՝ վստահանալով իր ճակատագիրը մարտիկ խմբերին. բանն այնտեղ հասաւ, որ քաղաքի հայկական մասերում ժողովուրդը շարունակում էր ապրել սովորական կեանքով, մինչդեռ թուրքերի թաղը երկաթէ օղակով շրջապատւած էր. բարրիկադներից որոտ էր, որ լսւում էր։

Կռիւն այսպէս շարունակւեց 4—5 օր, փոխարքան դիմեց յեղափոխական կուսակցութիւնների միջնորդութեան, որ նրանք հաշտեցնեն կռւող կողմերին։ Առիթ եղաւ ներկայ լինելու յեղափոխական կազմակերպութիւնների ներկայացուցիչների ժողովում, երբ ոստիկանապետ Ցիս եկաւ յայտնելու, որ Դաշկովը խնդրում է նրանց միջնորդութիւնը և յատկապէս կ'ուզէր, որ օցիալ-դէմոկրատները որևէ կերպով վերջ դնեն հայ-թուրք. ընդհարման։ Դա մի ապշեցուցիչ առաջարկ էր։ Մենք ականջներիս չէինք հաւատում։ Հաւաքւած էին երկ-երկու պատգամաւոր իւրաքանչիւր կազմակերպութիւնից և ոստիկանապետը դիմելով յեղափոխականներին՝ երկար բարակ խօսում էր, թէ ինչպէս կառավարութիւնը յոյս ունի, որ մենք վերջ կը դնենք կռւին, որովհետև զորքերն անզօր են։ Սօցիալ դէմոկրատները պատասխանեցին, թէ իրանք յանձն կ'առնեն խաղաղացնել քաղաքը, եթէ նրանց 500 հրացան տրւի և բաւարար փամփուշտ։ Սա մի „համարձակ" առաջարկ էր, և ամենքս հաւատացած էինք, որ տալու չեն։ Բոլոր միւս կուսակցութիւնները յայտնեցին, որ իրանք դէմ չեն լինի, եթէ տրւին զէնքերը միայն սօցիալ-դէմոկրատներին։ Ո՞վ էր հաւատում, թէ կը տան։ Ինչ էք կարծում, 8իսը գնաց, մի ժամ յետոյ եկաւ յայտնելով, որ Դաշկովը համաձայն է տալ 500 հրացան, և մի ժամ յետոյ իրօք ի կատար ածեցին այդ վճիռը։ Կարո՞ղ էք երևակայել մեր զարմանքն ու ապշութիւնը։ Եւ այն երեկոյեան սօց. դէմոկրատական խումբը Դաշնակցականների հետ արդէն բարրիկադների վրայ էր։

Թուրքերի դրութիւնն էլ աւելի դժւարացաւ. յաջորդ օրը նրանք կարողացան գիշերով քաղաք բերել տալ մօտ 6—7 հարիւր Բօրչալուի արիւնծարաւ թուրքեր։ Արանց գալով նրանք յանդգնեցան. կռիւը վերսկսւեց։ Չը նայելով որ սօց.-դէմոկրատների խումբը հրացանների ծայրերին ապիտակ դրօշակ ունէր և աշխատում էր խաղաղութեամբ դարձել, թուրքերին համոզել, որ վար դնեն զէնքերը, նրանք յանկարծակի յարձակւեցին սօ.-դէմոկրատների վրայ, սպանեցին 2-ին, վիրաւորեցին 4-ին. խումբը տեղի տւեց և յետ քաշւեց դիրքերից։ Հրապարակի վրայ մնացին դարձեալ Դաշնակցականները և այդ օրը եղաւ ամենակատաղի կռիւը։ Բօտանիկական այգու ամբողջ տարը Դաշնակցականների ձեռքն էր, այնտեղից գնդակների տարափ տեղացին պաշարւած թուրքերի վրայ և զսպեցին կատաղի բօրչալուեցիներին։ Այսպէս վերջացաւ սօց.-դէմոկրատների խաղաղարար միսիան և նրանց՝ թուրքերին հակայնելու եղբայրութեան դաղափարը խօսքով և ոչ զէնքով, վերջացաւ իրանց մի քանի ընկերների մահով։

Մանրամասնութիւնները մի կողմ թողնելով, պիտի ասել, որ բոլոր կռիւները վերջացան թուրքերի կատարեալ պարտութեամբ։ Բօրչալուի աւազակները բան չը շահեցին, միայն կարողացան կրակ տալ Մէյդանի մի քանի փոքրիկ հայ խանութները և վերջի վերջոյ նրանց մեծամեծները դիմեցին դուսային՝ խնդրելով խաղաղութիւն ու հաշտութիւն։ Հաշտութիւնը կայացաւ ինչպէս ամեն տեղ կամիդիայով, բայց երկու կողմն էլ մինչև այսօր զգոյշ են և զինւած։ Վրայի (բայի ֆեդերալիստներից) իշխաններն ու բուրժուազիան ամենաթշնամական վերաբերմունքն ունեցան դէպի հայերը և բարեկամաբար տրամադրւած են դէպի թուրքերը։ Անձամբ դրանց հետ չիւեցի այս արիւնոտ օրերում, և տպաւորութիւնս յուսահատական է։ Լրագրներից շատ բան կ'իմանաք։ Անգամ „Վօզրօժդենիէ" թերթը դիմակը դէն դրեց և սկսեց բացարձակ հայերի դէմ գրել, և Դաշնակցական կոմիտէն ստիպւած եղաւ երկ խղել նրա հետ իր կապերը։ Այս խմբը սակայն դեռ շատ ջուր կը վերցնի, չը նայելով հայերի և մասնաւորապէս Դաշնակցութեան ցոյց տւած կատարեալ տակտին և սառնարիւնութեանը։

Գանձակի և Թիֆլիսի ընդհարումները արձագանք գտան ամբողջ երկու նահանգներում։ Այլևս անկիւն չը կայ, ուր մի հայ և մի թուրք իրար կողքի ապրեն խաղաղութեամբ. կոտորած ու թալան է ամեն կողմ, փախստականներ ու բռնաբարներ են, որ գալիս են այստեղ ամեն օր։ Երկաթուղու գիծը Բաքուից Թիֆլիս և Թիֆլիսից մինչև Ալէքսանդրապօլ ամեն տեղ ենթարկւեց աւերի ու յարձակման։ Մի քանի տեղերում զինւորների ու ժանդարմների աչքի առաջ վագոններից հանել են հայերին ու կոտորել։ Կողոպուտն անհաշիւ է։ Գանձակի գաւառում գործում է Համազասպը իր խմբերով։ Զանազան տեղերից լսւում է թիւրք գիւղերի աւերի ձայներ։ Արիւնի և աւերածի մի փոթորիկ է գործում։ Կատարեալ պատերազմ է երկու ժողովուրդների մէջ ամբողջ գծի վրայ և ցաւն այն է, որ շփման կէտերը չափազանց շատ են այդ իրար մերթ ոտող երկու ազգի մէջ։ Մէկը դժբախտ իր գիտակցութեամբ ու կուլտուրայով, մի-

սը դժբախտ իր արիւնարբու բնաւորութեամբ, իր անգիտութեամբ ու գազանութեամբ։

Ի՞նչ է անում կառավարութիւնը։ Նրա տակտիկան Հայերի վերաբերմամբ մազի չափ անգամ չի փոխւել։ Մի քանի թեթեւ փորձեր եղան Դաշկովի կողմից զէնքեր բաժանել Հայ գիւղացիներին (հինգ տանը մի հատ)։ Բայց այդ վճիռը նա չը կարողացաւ իրագործել, որովհետեւ Թիֆլիսի ամբողջ ապայակոյսը որոշեց բոլոր ուժով դիմադրել և զէնք չը տալ և չը աւեց։ Դաշկովը յայտարարեց իրեն հիւանդ, և պաշտօնը վարում է Մալամա։ Կասկածի տեղիք չը կայ, որ այստեղի բարձր վարչութիւնը միանգամայն շարունակում է քաջալեր հանդիսանալ Թուրքերի բարբարոսութիւններին։ Մեր բուրժուա ինտելիգենտները վերջապէս համոզւել են, որ և՛ Շիրինկին (մանաւանդ սա) և՛ Մալամա, և ԿրիմՀՎիրէյ (սա առանձնապէս) շարունակ դաւադրութիւն են կազմում Հայ ժողովրդի դեմ, իսկ Դաշկովը մի թոյլ, անկամք, անխելք, բայց դարձեալ դէպի Հայերը առանձնապէս լաւ չը տրամադրուած մարդ է, խաղալիք միւսների ձեռքին...

Դարալագեազում Թուրքական Հօրս գիւղը իսպառ աւերող Հայերի պատգամաւորութիւնը երեկ այստեղ էր։ Եկել է զէնք խնդրելու, իրենց գաւառը մաքրելու համար։ Խեղճերը պատրաստ են տալ ինչ ունին, միայն թէ հրացան լինի, պարզ գիւղացիներ են, բայց ինքնապաշտպանութեան ամենաբարձր գիտակցութեան հասած։ Նրանք պատմեցին, թէ Հօրսի Թուրքերին վարձատրելու համար Երեւանի փոխանահանգապետ Կովալիով և գեն.-նահանգապետ Եպիկէվիչ անտեսապէս իսպառ քայքայեցին 12 Հայ գիւղ։ Ամեն տեղից վերցրել են տասնական ռուբլի և աւել Թուրքերին։ Այս օրինակը բերեցի, որ լաւ հասկանալի դառնայ, թէ կառավարութիւնը որքան քնքոյշ է դէպի Թուրքերը։ Ո՞ր Հայի կրծատը վերադարձրին մինչև այժմ։ Ահա թէ ինչու դէպի կառավարութիւնը Հաւատի ու վստահութեան նշոյլ չի մնացել։ Ծաղր ու ծանակի է ենթարկւում ամեն մի պատգամաւորութիւն, որ ուզում է դիմել փոխարքային։

Թիֆլիսում այժմ բոլոր փողոցները ինքնապաշտպանութեան (և յատկապէս Դաշնակցական) խմբերի հսկողութեան տակ են։ Թաղերը խարհուրդ են կազմում, գումար հաւաքում, ապա որոշ թւով Դաշնակցական զինւոր խնդրում իրանց ծախսով որպէս գիշերային պահակ։ Սա արդէն ազատութիւն չէ, այլ կատարեալ անարխիա։ Գիշերները քաղաքում մի հատ ոստիկան չի երեւում։ Բազմաթիւ են խուլիգանները, որոնք աշխատում են կրակ տալ Հայերի տները։ Քանիները բռնւեցին նաւթով լի ամանը ձեռներին. մինչև այժմ նրանց չը յաջողւեց իրենց ոճրագործ ծրագիրը գլուխ բերել, տեսնենք մինչև ե՞րբ։ Զարմանալի չի լինի, եթէ մի օր լսէք, թէ Թիֆլիսը վառւում է։ Ամենայն օր հրդեհի փորձեր։ Երեկ մի խուլիգան բռնեցին ըստպայի զգեստով. ուստ բանակին արժանի ապան չ'ամաչեց գալ իր մունդիրն ուզելու, երբ իմացաւ խուլիգանի բռնւելը։ „Եա երկու ժամով էի տւել նրան" ասում էր նա. իսկ խուլիգանը բռնւեց նաւթը ձեռքին։ Զարդից չէին վախենում, բայց հրդեհից դողում են ամենքը։

Ահա երեք օր է, որ Բաթումից սարսափելի լուրեր են գալիս. կօզակները ապանում են ու թալանում անպատիժ. հրատարակւած է պաշարման դրութիւն, և ազգաբնակութիւնը յանձնւած է մի քանի հարիւր կօզակների կամայականութեան։ Պատգամաւորութիւն եկաւ Դաշկովի մօտ խնդրելու, որ դուրս տանեն կօզակներին. այստեղից այդ մտքով հրաման գնաց, բայց կոմենդանտը ո՛չ միայն չը կատարեց, այլ և շտապեց հրատարակել պաշարման դրութիւն։ Եկողների պատմածները անհերեւակայելի են։ Մի քանի հազար զէնքեր են խլել բնակիչներից, տները խուզարկում են ու թալանում։ Մի ահագին միտինգի ժամանակ զօրքը վրայ է հասել և կոտորել. ի միջի այլոց ապանւած են երեք հռետորներ։

Թիֆլիսի Դաշնակցական խմբերը շատ զոհ չ'ունեցան. հագիւ մի քանի ապանւած, և մօտ 10—20 վիրաւոր։ Բայց այդ զոհերի մէջ էր և մի ընտիր տղայ, խնուսցի Մուշեղը. 20—25 տարեկան երիտասարդ, հուժկու, թիկնաւէտ մի տղամարդ, սարից պոկւած մի հսկայ։ Եւ բոլորս լացինք այդ մահը, մի հերոսական մահ, որ Խարփուղի թաղում տեղի ունեցաւ, երբ կարիճ երիտասարդը իր խմբով ներս խուժեց Թուրքերի դիրքը, կոտորեց և կրակ տւեց։ Ափսոս որ անխոհեմաբար ուշ էր յետ քաշւել։ Թաղումը յուզիչ էր։ Որքա՜ն մայրեր էին լալիս այդ „Ղարիբ Ախպօրը", ինչպէս անւանում էին նրան իրանց գովքի մէջ Հաւլաբարի կանայք։ Ուրիշ „ղարիբ" ընկերներ էլ կան այստեղ, բոլորն էլ պատիւ են բերում Թիւրքա-Հայաստանին։ Ընտիր ու կատաղի մարտիկներ են, սառնարիւն, հպարտ ու քաջ տղամարդիկ։ Վստահութեան և հաւատի մի շունչ է փչում մարդու վրայ դրանց հետ խօսելիս. մառայլ են, լուրջ, ճակատները կնճռոտ, բայց որքա՜ն այժ, որքան եռանդ... Եւ այլ ու այլ տեսակ հրաշալի մեր այժերը, յաւ է ասել, վատնւում են մի ամուլ, ամօթալի պայքարի վրայ շնորհիւ մի բարբարոս կառավարութեան, որ կորցրել է ամօթի վերջին նշոյլը...

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

ՄՕՍԿՎԱՅԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՐԷԱԿՑԻՈՆ

(Թղթակցութիւն)

ՄՕՍԿՎԱ, յունուարի 10

Հեռագիրները ձեզ հասած և ծանօթացրած կը լինին, անշուշտ, անցած դեկտեմբեր ամսի անմոռանալի դէպքերի հետ, բայց այդ հակիրճ տեղեկութիւնները լիակատար լինելուց շատ հեռու են. դժբախտաբար այն բոլոր բուն ժողովրդասիրական հրատարակութիւնները, որոնք միայն կարող էին ճիշտ լուսաբանութիւն տալ ներկայ դրութեանը—դատապարտւած են լռութեան։ Մնացած թերթերը բացատրում են անցքերը կամ սև հարիւրեակի, կամ ամենաշատը՝ լիբերալ-բուրժուական տեսակէտից։ Այստեղի լիբերալ շրջանները սիրում են ամեն մի անյաջողութիւն „ազատագրական շարժման" մէջ վերագրել յեղափոխականներին, իսկ իրենց համարել ամեն մի քաղաքական յաղթութեան և բարիքի հեղինակ։ Բայց թողնենք դրանց, և աշխատենք ըստ կարելոյն գնահատել անցած դէպքերը։

Ամենից առաջ մեզ ասում են, որ ապստամբութիւնը անյաջող էր. նա ճնշւեց և առաջ բերեց ներկայ դաժան ռեակցիան։ Ճշմարի՞տ է արդեօք այս առարկութիւնը։

Մօսկւայի վերջին դէպքերի վերաբերմամբ կարելի է վիճել տակտիկայի, ընտրած մօմենտի տեսակէտից, ոյժերի փոխադարձ յարաբերութեան տեսակէտից, բայց ընդհանրապէս յեղափոխութիւնը դատապարտելու համար հարկաւոր է մի ուրիշ, հակադիր թէօրիա մշակել և վէճը դարձնել սկզբունքային։ Մօսկւայի ապստամբութիւնը նպատակին չը հասաւ, ճիշտ է, բայց չի կարելի հերքել նրա օգտակարութիւնը։ Նա անյաջող էր, որովհետև չը հասցրեց իր նպատակին, բայց նա օգտակար էր, որովհետև ժողովուրդը, աշխատաւոր դասերը դուրս եկան իրենց բռնաբարւած իրաւունքները պաշտպանելու. ընդհարւեցին „կառավարութիւն" կոչւած բռնակալ ոյժի հետ, թէև ինչ-ինչ անբարեյաջող հանգամանքներ թոյլ չը տւին նրանց հասնել արդար նպատակին։ Անյաջող կը լինէր շարժումը այն տեսակէտից, եթէ բանւորութիւնը չը լսէր իր առաջնորդների ձայնը, տատանւէր, կամ առաջ բերէր ներքին պառակտում։ Այդպիսի դէպքեր տեղի չունեցան—այնքան

համբոյշի և ոգևորուած էր բանւորական մասսան... Խուլիգանական հակա-յեղափոխութիւն տեղի չունեցաւ, թէև ժողովուրդը տանջանքների գագաթնակէտին էր հասել, և ինչպէս յայտնի է, այդպիսի պայմանները միշտ հակա-յեղափոխութեան նպաստաւոր հող են ստեղծում, երբ ժողովուրդը հիասթափւում, յոգնում է, իսկ կառավարութիւնը շահագործում է այդ տրամադրութիւնը։

Միւս կողմից քննենք հէնց բուն դէպքերը. ի՞նչ են ցոյց տալիս նրանք։ Ամբողջ մի շաբաթ քաղաքի մեծ մասը յեղափոխականների ձեռքին էր. ահաբեկուած ոստիկանութիւնը անհետացել էր, ապաստանել քաղաքի մի քանի ոստիկանատներում և ստիպուած էր պաշտպանողական դիրք բռնել յարձակւող յեղափոխական զինւորախմբերի դէմ։ Զինւորականները այնքան ահաբեկուած էին, որ ծպտեալ էին ման գալիս և խմբերով։

Թէ կառավարութիւնը ինչ աստիճան վստահ չէր իր ոյժերի վրայ, որքան շփոթուած և որքան զարհուրած „կարմիր հրէշից“, դա երևում էր այն տարօրինակ եղանակից, որով նա կռւում էր ըմբոստների դէմ։ Զինւորները և ժանդարմները աջ ու ձախ անմիտ զալպեր էին տալիս բոլորովին անտեղի, թնդանօթներից արձակում էին բոլորովին „անմեղ“ ժողովրդի վրայ, որ ոչ մի առնչութիւն չունէր ապստամբների հետ, ամենամարդաշատ փողոցներում թնդանօթներից „կարտեչ“ էին արձակում և մայթերը երեխաների և կանանց դիակներով ծածկում. Դօն-Քիշոտի հիւանդ երեւակայութիւնը փոխ առած՝ Մոսկւայի „ցամաքային ծովապետ“ Դուբասովը հրամայում էր ռմբակոծել հոյակապ տներ, ուր ոչ մի ապստամբ չը կար, բայց „կարող էր լինել“...

Ապստամբութեան վերջին օրերին, Պրեսնեա կոչուած քաղաքամասում, միապետական կառավարութեան անկման ամենաբնորոշ փաստեր տեղի ունեցան։ Նա խըփում էր աջ ու ձախ. թէև մի քանի գործարաններում և տներում էին կենտրոնացած յեղափոխական զինւորախմբերը, բայց ռմբակոծութեան արժանացաւ ամբողջ քաղաքամասը։ Ռմբակոծութիւնից զարհուրած Պրեսնեայի խաղաղ բնակիչները դուրս էին թափւում փողոցները, ուր նրանց անխնայ կոտորում էին Դուբասովի զօրքերը։ Եւ եթէ նկարագրելու լինենք այդ տեսարանները, շատ երկար կը տևէր։ Մենք միայն ուզում ենք ցոյց տալ, որ այս կոտորածները հոգեբանօրէն բղխում էին „կառավարութեան“ տրամադրութիւնից, երբ ամենափոքրիկ հարւածը նրան ենթադրել էր տալիս ահագին դիմադրող ոյժ, երբ ամեն մի անցնող-գնացող, եթէ նա զինւորական համազգեստ չունէր, համարւում էր յեղափոխական և տերրօրիստ, և նա հարւածում էր, կոտորում էր հարիւրներով անմեղներ, յուսալով և ենթադրելով որ դրանց մէջ կը լինեն գէթ մի քանի յեղափոխականներ...

Կառավարութեան դրութիւնը փափուկ էր և յաղթութեան յոյսերը պրօբլեմատիք նաև շնորհիւ մի այլ պատճառի — նա ունէր „կասկածուած“, և ոչ միայն կասկածուած, այլ և ուղղակի „անյուսալի“ զօրամասեր։ Յայտնի է, որ այստեղի դէպքերից մի քանի օր առաջ, Մոսկւայի զօրքերի մէջ սկսուեց սովորական զինւորական շարժում, Ռոստովսկի և մի ուրիշ վաշտ ըմբոստացան, հեռացրին սպաներին և սկսեցին ժողովներ կազմել յեղափոխականների հետ. ըմբոստացաւ նաև գընդաձիգ վաշտը, բայց կառավարութեան անթիւ ջանքերը մի կողմից՝ և, ինչպէս պատմում են, ղեկավարների և զինւորների մէջ տեղի ունեցած մի քանի թիւրիմացութիւնները միւս կողմից՝ պառակտում առաջ բերեցին ըմբոստների շարքերում և միապետութիւնը կրկին տէր դարձաւ զինւորական դրութեան։ Ինչպէս պատմում են, ապստամբութեան օրերում այդ ըմբոստներին զինաթափ էին արել և փակել. յամենայն դէպս, նրանց դուրս չը բերեցին ժողովրդի դէմ կռւելու. Թէ ոստիկանութիւնը և թէ կռւող դրագունններն ու ժանդարմները կռւի օրերին, ինչպէս պնդում են նրանց մերձաւորները, արժանացել էին չը տեսնուած, չը լսուած հայրական խնամքի։ Չընայած գործադուլին՝ „մարտնչողները“ կերակրւում էին արտակարգ ճոխութեամբ, ստանում էին նաև փող։ Փողոց էին դուրս բերում բոլորին հարբած և տալիս էին կատարեալ լիազօրութիւն գործելու և „հայրենիքի թշնամիներին“ պատժելու, ինչպէս կը բարեհաճեն... վերջինների կատարած բարբարոսութիւնները նկարագրելու ոչ մի հնարաւորութիւն չը կայ։ Նրանց արարքները պատկերացնելու համար՝ որքան կարող էք, ազատութիւն տւէք ձեր երևակայութեանը։ Փոքրիկ երեխաներին սրերով և սւիններով խողխողելը միջակ չարագործութիւն էր համարւում։ „Կարմիր խաչի“ խմբակները գնդակահարելը՝ պարտականութիւն էր։ Այդպէս էր հրամայել Դուբասովը, որը չէր ցանկանում ճանաչել „Կարմիր խաչի“ կազմակերպութիւնը իբրև չէզոք մարմին (իր յայտարարութիւններից մէկում)։ Մենք եղանք երկու մեծ հիւանդանոցներում և մեզ սարսափ պատճառեց վիրաւորուած երեխաների ճնշող մեծամասնութիւնը...

Այս բոլոր բարբարոսութիւնների թագն ու պսակն եղաւ մի արտակարգ վայրենի արարք — կառավարութեան արբանեակը յանդգնեց հարւածել գիտութիւնը։ Դա պրօֆէսօր Վօրօբեօվի աներևակայելի սպանութիւնն էր։ Դէպքը այնքան այլանդակ էր, որ մինչև անգամ Դուբասովի կառավարութիւնը իրեն անյարմար դրութեան մէջ զգաց և այժմ, հարազատ որդու դատաստանից ազատւելու համար, ճգնում է անօրմալ յայտարարել նրան. հերոսների շրջանից ստիպուած է գլորել հոգեկան հիւանդների շրջանը... Եթէ սրա վրայ աւելացնենք այն մեծ տպաւորութիւնը, որ թողել են ապստամբները զօրքերի և ոստիկանների վրայ՝ իրենց քաջարի յարձակումներով և հերոսական դիմադրութեամբ, եթէ աւելացնենք այն զգալի կորուստները, որ ունեցաւ Դուբասովը այս կռւում (պաշտօնական յայտարարութիւնը չափազանց նւազեցրել է թւերը), այն ժամանակ կարելի է փոքր ի շատէ ճիշտ գնահատութիւն տալ յեղափոխական կռւին։ Չմոռանանք նաև այն հանգամանքը, որ կառավարութիւնը չէր, որ գրաւեց յեղափոխականների դիրքերի մեծ մասը. իրենք ապստամբները քանդեցին իրենց բարրիկադները ժողովրդի օգնութեամբ։

Սակայն ինչպէս վերևում յիշեցինք, մի խոշոր առարկութիւն էլ կայ յեղափոխականների դէմ։ Ասում են, որ այս անաջող ապստամբութիւնը պատճառ եղաւ ներկայ ռէակցիային, հետևաբար կառավարութեան յաղ-

թութիւնը մեծ է, եթէ նա այդպէս վճռական կերպով փոխեց իր քաղաքականութիւնը։

Այս առարկութիւնը չի կարող դիմանալ լուրջ քննադատութեան։ Իսկապէս, եթէ մենք որոնելու լինենք ռեակցիայի ծագումը, կը գտնենք նրան վերջին գործադուլից շատ առաջ։ Կառավարութիւնը հոկտեմբերի հսկայական գործադուլից, ինչպէս և պօգրօմներից ու Լեհաստանի պատերազմական դրութեան առթիւ տեղի ունեցած փոքրիկ գործադուլից յետոյ համոզուեց, որ նա չափազանցրել էր դիմադրական շարժման ոյժը, որ ընդհանուր գործադուլը այնքան էլ սարսափելի բան չէ, ինչպէս կարծում էր առաջ։ Իսկ եթէ նա անմիջապէս չը սկսեց իր յետադիմական ընթացքը և ճնշումները—պատճառը՝ մի կողմից զինուորական ահարկու ըմբոստութիւններն էին, որոնց պէտք է վերջ տրուէր, միւս կողմից էլ,—և սա շատ կարևոր է,—կառավարութիւնը ձգտում էր լաւ ծանօթանալ յեղափոխականների ոյժերի, նրանց կազմակերպութիւնների, կուսակցութիւնների փոխադարձ յարաբերութիւնների հետ, ուսումնասիրել նրանց տակտիկը, թոյլ կողմերը, մի հանգամանք, որ ապագայ ընդհարման համար շատ կարևոր էր։

Ահա թէ ինչով մասամբ կարելի է բացատրել այն լայն ազատութիւնը, որ վայելեցին ձախակողմեան կուսակցութիւնները և նրանց օրգանները համարեա ամբողջ մի ամիս։ Այս բոլոր պատրաստութիւնները տեսնելուց յետոյ ռեակցիան արդէն գլուխը բարձրացրեց։ Առիթը գտնել դժուար չէր—հրատարակեցին միութիւնների վերաբերեալ կանոնները և փոստ-հեռագրական Միութեան անդամները հրաժարուեցան լուծել այդ „ապօրինի" միութիւնը։ Բուրժուական անհեռատես թերթերը կառավարութեան յամառութիւնը վերագրում էին օրեւիցէ մինիստր Դուրնօվօի ինքնասիրութեան, այնինչ այդ դէպքը մի ամբողջ շրջանի սկիզբն էր կազմում և ունէր քաղաքական կարևոր նշանակութիւն։ Սկսեցին մի շարք բռնութիւններ, բանտարկութիւններ (օրինակ, գիւղացիական միութեան հիմնադիրների և այլն)։ Նշմարուեց արհամարհական վերաբերմունք դէպի լիբերալները (զեմստվօական և քաղաքային գործիչների, ներկայացուցիչների ընդունելութիւնը Վիտտէի մօտ և երկար ժամանակ անպատասխան թողնելը) և այլ սրա նման ռեակցիայի սիմպտօմներ։ Հարկաւոր էր գրգռել բանւորութիւնը, մի կերպ նրան փողոց դուրս բերել, բաժանել յեղափոխականներին լիբերալներից, որոնք, թէև շատ տարբեր եղանակներով, բայց միահամուռ յարձակումներ էին գործում կառավարութեան վրայ։ Կոնֆլիկտը անխուսափելի էր։ Պետերբուրգի բանւորները մի քանի անգամ գրեցին, թէ նրանք դուրս կը գան կռւի դաշտ այն ժամանակ, երբ դա ձեռնտու կը լինի իրենց, և ոչ թէ Դուրնօվօին։ Ընդհարումը արդէն սկսուել էր, միայն պաշտօնապէս չէր յայտարարուած։

Կառավարութիւնը չէր կարող երկար սպասել, հարկաւոր էր ռեակցիային „օրինաւոր" ընթացք տալ, որը արդէն ժամանակի հարց էր դարձել։ Բանւորութեանը մենամարտութեան կանչելու համար հարկաւոր էր վիրաւորել նրան։ Վիտտէն վճռողական քայլ արեց—բանտարկեց բանւորական պատգամաւորների խորհուրդը, իր ամբողջ կազմով։ Էլ անկարելի եղաւ յետաձգել ընդհանուր գործադուլը, որին միացաւ Մոսկուայի ապստամբութիւնը… Ռեակցիան իր ընթացքը շարունակեց առանց որևէ օրգանական կապի ապստամբութեան հետ։ Նա միայն ընդունեց արտաքին փայլ։ Կառավարութիւնը ցոյց էր տալիս, որ իբր թէ նուաճում է ապստամբներին, այն ինչ նա զբաղուած էր բոլորովին այլ գործերով։ Ապստամբութիւնը Մոսկուայումն էր, իսկ Տուլայում, Տօմսկում, Սարատովում, Կիշնևում պէտք էր ընտրութիւնների վրայ ազդել ամենացինիկ կերպով։ Հարկաւոր էր բանտերը լցնել ամենահամեստ լիբերալներով, և խանգարել յեղափոխութիւնը դատափետող Սահմանադիր-Ռամկավարականների ժողովները։

Ոչ, ապստամբութիւնը չէր ռեակցիայի պատճառը։ Անկախ դրանից, ռեակցիան նպատակ դրեց գրաւել կառավարութեան շուրջը պահպանողական տարրերը, և այդ նպատակով արդէն ամենաեռանդուն ագիտացիա, ամեն միջոց գործ է դրւում պառակտել դիմադրական ոյժերը, քայքայել նրանց կազմակերպութիւնը։ Եւ այժմ սկսուած է մի կռիւ կառավարութեան և օպպօզիցիայի մէջ, չարաբաստիկ դումայի շուրջը։ Բայց դրա մասին յաջորդ անգամ։

Շ։

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

Եւրոպայի հայասէրների դիմումը Միացեալ-Նահանգների նախագահ Ռօզվելտին՝ արձագանք գտաւ հայկական գաղութների մէջ։ Փետրվարի 17-ին Ժընևում տեղի ունեցաւ հայկական ժողով, մասնակցութեամբ ուսանողութեան և հայ գաղութի, և որոշումը արդէն հեռագրով հաղորդուեց Ռօզվելտին։ Այդ որոշման մէջ յոյս է յայտնուած, որ Անդրատլանտեան Մեծ հանրապետութեան ներկայացուցիչը իր բոլոր ջանքերը գործ կը դնի Թիւրքահայկական խնդիրը, սրբագործուած միջազգային դաշնագրերով, ներկայացնելու Լահէյի վեհաժողովին։ Նոյն մաքով հեռագիրներ են ուղարկուած արդէն բուլղարական կարևոր հայ գաղութներից՝ Սօֆիայից, Ռուսչուկից և Վառնայից, որտեղ այդ նպատակով կազմակերպուեցին յատուկ և բազմամարդ միտինգներ։ Նոյնպիսի դիմումն անելու պատրաստութիւններ են տեսնւում Եգիպտոս և Ամերիկա։ Եւրոպական ուրիշ հայ գաղութները՝ հիմք ունինք կարծելու, յետ չը պիտի մնան և պիտի միացնեն իրենց ձայնը ընդհանուր կոչին։

*

Հրաւիրում ենք հայ հասարակութեան ուշադրութիւնը Լօնդօնում սկսուած անգլիերէն „Pro Armenia"-ի վրայ, որ նոյն նպատակն ունի, ինչ որ Պարիզի "Pro Armenia"-ն։

*

Մեր յեղափոխական մամուլը հարստացաւ մի նոր և կարևոր հրատարակութեամբ,—„Յառաջ" լրագիրը, որ սկսեց լոյս տեսնել յունուար ամսից Թիֆլիսում և նուիրուած պիտի լինի Դաշնակցական գաղափարների տարածմանը։

*

Փետրուար 27-ին Թիֆլիսից ստացանք հետևեալ հեռագիրը. „Կառավարութիւնը սիստեմատիկաբար զինաթափ է անում հայերին, կատարելապէս հանգիստ թողնելով թուրքերին"։

*

Այս օրերս Դաշնակցութեան Ժընևի տպարանից լոյս տեսաւ մի նոր բրօշիւր, ‚‚Մեծ մարդասպանի դէմ'' վերնագրով, որ Աբդիւլ-Համիդի դէմ եղած մահափորձի դատավարութեան **պաշտօնական արձանագրութիւնն** է։ ‚‚Դրօշակի'' խմբագրութեան կողմից բրօշիւրին կցած յառաջաբանի մէջ, ի միջի այլոց, ասուած է.

‚‚Այդ զաւեշտական հայհոյանքներն, ուղղած Յեղափո-

խուժեան հասցէին, անէծքները, թափած արտօսրների գլխին, անծայր կսկծիքները, սարքած մեղադրանքների եւ նրանց ծրագրի շուրջը, վերջապէս անպատիժ տանջանքները, գործադրուած անմեղ կալանաւորների վրայ,—են եւ կը մնան անհերքելի վաւերագրեր՝ որ այս դատը խորապէս տխուր է, զուրկ արդարադատութեան տարրական պահանջներից, համեմատ նախամտածուած չարամտութեամբ։ Ապագայ յեղափոխական պատմութեանն է վերապահւում՝ սրբագրել նոյնահերեան անարգ դատաւորութիւնը եւ հրապարակ հանել փ ա ս տ ե ր ը իրենց իսկական կերպարանքով։ Մեր աչքերը այսօրուան չէ պատկանում։ Բայց մի բան, որ կարող ենք եւ պէտք է ասենք այսօր—այն է, որ այդ նենգամիտ դատաւորութեան տակ թաղուած սպանուածները չեն, որ պիտի կանգնեցնեն հայ ժողովրդի Յեղափոխական մարտը, ազատագրական մի արդար մարտ, որը անսասան եւ անյողդողդ, կը շարունակէ վիճել իր գլխաւոր նպատակին՝—ոչնչացմանը այն ռեժիմի, որ քամեց արիւնը ե՛ւ հայի, ե՛ւ մակեդոնացու, ե՛ւ քրիստոնեայի, եւ նոյնիսկ մահմէդականի, որոնց բոլորի կրծքից հնչեց ցասման եւ ափսոսանքի մի ճիչ յուլիսի 21-ին, երբ հեռագիրը գուժեց սուլթանական հարուածի սրտաբեկ վիժումը…"

*

Վստահելի աղբիւրից մեզ տեղեկացնում են, որ Կովկասի այժմեան փոխարքայ Վորոնցով-Դաշկովի հրաժարականի կամ յետ կանչուելու լուրը՝ անհիմն է։ Փոխարքան համարւում է կենտրոնական կառավարութեան քաղաքական ինտրիգների հաւատարիմ գործակալ եւ այդ պատճառով նրա դժբախտ պաշտօնավարութիւնը դեռ տեւողական պիտի լինի։

*

Նոր-Նախիջեւանում յունուարի վերջերին տեղի ունեցաւ հայկական մի բազմամարդ մ ի տ ի ն գ, որը ընդունեց հետեւեալ որոշումները.

1) Յայտնել մեր հիացմունքն ու համակրանքը Կովկասեան հայ ազգաբնակութեանը՝ վերջին հայ-թուրքական ընդհարումների ժամանակ հակայեղափոխական տարրերի դէմ ցոյց տուած անսահման տոկունութեան եւ անձնուէր ու քաջաբար վարած կռիւների համար։

2) Յայտնել խորին յարգանքներ Հ. Յ. Դաշնակցութեան եւ բոլոր այն քաջամարտիկ զինուորներին, որոնք հերոսաբար իրանց կուրծքը դէմ դրին թշնամուն եւ արեան գնով պաշտպանեցին հայ ժողովուրդը։

3) Յայտնել մեր արհամարհանքը բոլոր դրդիչներին եւ նոցա գործիք դարձած տգէտ թուրք ամբոխին։

4) Պահանջել կառավարութիւնից մի կողմ թողնել իր երկդիմի քաղաքականութիւնը եւ վերջ դնել եղբայրասպան կռւին։

5) Պահանջել բոլոր յեղափոխական կուսակցութիւններից, ցոյց տալ իրանց աջակցութիւնը հայ ժողովրդին, որն օրհասական կռիւ է մղում տաճիկ եւ ռուս բռնապետութեանց դէմ՝ յեղափոխական գաղափարների համար։

6) Վերջապէս, բողոքել այն յանցաւոր անտարբերութեան դէմ, որ ցոյց են տալիս մինչեւ այժմ դէպի հայ ժողովուրդը կուլտուրական ազգերը եւ նոցա շահամոլ պետութիւնները։

Ժողովը բուռն ծափահարութիւններով հաստատեց վերը յիշած որոշումները։

Ն Ո Ւ Ի Ր Ա Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Արեւմտեան Բիւրոն ստացած է՝

Ռ ո ւ ս ա ս տ ա ն.—„ԴՐԱՄ" Կոմիտէն 5000 ֆր.

Շ վ է յ ց ա ր ի ա.—Ցիւրիխ Թ. էն 50 ֆր.

Գ ե ր մ ա ն ի ա.—Շառլոտէնբուրգ Յ. Վ. էն 60 ֆր.

Ֆ ր ա ն ս ի ա.—Պարիզ Պ. Երիմէն 10 ֆր.

Ե գ ի պ տ ո ս.—Աղէքսանդրիա Փոքորիկ խմբէն 103 ֆր. 60 սան. (583 դահ. որուն 183 դահ. տեղական ծախսեր):

Ա մ ե ր ի կ ա—Թրոյէն՝ ի նպաստ Դրօշակի (11 դոլար) 56 ֆր. 65 ս.

Ռ ու մ ա ն ի ա.—Ֆոքշանի Ասողիկ խ. 130 ֆր. (132 ֆր. 2 ֆր. ը փոխ. ծախս): Նուիրատուներն են՝ Սուր 8, Երկաթ 8, Զօրք 8, Անտոն 8, Հայդուկ 8, 8, Թափառական 6, Զոհ 8, Վահրամ 8, Հուր 8, Սմբատ 8, Զամբէկ 8, Առիւծ 2, Գողիադ 8, Ճամբորդ մը 8, Գոռայր 8, Թուր 8, Նապաստակ 4, Ալիմսան 4, Ոսկի 2, Թորոս 2: Գումար 132 ֆր.

Ընդհ. գումար 5410 ֆր. եւ 25 սանտիմ:

Ամերիկայի Կեդ. Կոմիտէ՝

ԼՕՈՒԷԼԻ ԿՈՄԻՏԷՆ

1903-ին	318 տոլար.
1904-ին	424 „
1905-ին	293 „

Համագումար 1.035 տոլար.

Պալքանեան Կեդր. Կոմիտէն՝

ՌՈՒՍՉՈՒԳԻ ԿՈՄԻՏԷ.—(1905 յուլիսէն— եւգս.) ընկերական խրնճոյքէ մը 6 լեւ 50 սան. Մանուէլեան խ. 19, Հրայր խ. 17, Տէւոր խ. 35, Թաթուլ Մալկարացի խ. 29, Բաբկէն Սիւնի խ. 22, Ռաշօ խ. 36, Շամէ խ. 35, Նուէր՝ Գ. Բ. 1, Բորապիայէն Նուէր՝ Համբարձում եւ Նազարէթ Եղբ. 5, Յարութիւն Միզոեան 5, Նազարէթ Տինօեան 5, Աթանաս Չաւշկեան 5, Տիգրան Այվազեան, Միհրան Աւետեան 4. Ստեփան Յակոբեան 3, Սուքիաս Մինօեան 3, Վահան Բզըրեան 3, Նասիպ Յակոբեան 3, Զաքար Գրիգորեան 3, Մխիթար Բարսեղեան 2, Ասատուր Մարտիրոսեան 1, ՍԱՄՈՎԻՏԻ Արծիւ խ. 91. 50, Անդրանիկ խ. 91. 50, Արկած խ. 92, Կ. Օհաննէսեանէ Նուէր 5, ՇԻՇԹՈՎԻ Առիւծ խ. 15, Վարօդ խ. 15. 50, Կայծակ խ. 23, 50. Գումար 581 լեւ 50 սանտիմ.

ՊՈՒՐԳԷԶԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷ.—(1905 յունուարէն—յունիս) Անդրանիկ խ. 21 ֆր. եւս 24, եւս 27, Ասաֆ խ. 39, եւս 36, Տիկ. Շամէ խ. 33, եւս 24, Նեվրուզ խ. 33, եւս 30, Սէրմենեան խ. 33, եւս 33, Ֆէդայի խ. 16, եւս 15, Վազգէն խ. 16, եւս 20, Զէյթուն խ. 30, եւս 35, Կայծ խ. 21, եւս 21: Գումար 507 ֆր.

ՇՈՒՄԼԱՅԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷ. — Ուժանակ խ. 59 լեւ. Խաչիկ Մարտիրոսեան խ. 4, Անդրանիկ խ. 10, Աղաս խ. 16, Կայծակ խ. 7, Նուէր Օ. Ա. է 5: Գումար 101 լեւ:

ՊՐԱՅԼԱՅԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷ.—(1905 յուլիսէն—դեկտեմ.) Առիւծ խ. 78 ֆր. Կարմիր Լեռ խ. 54, Գուրգէն խ. 66, Ագիլ խ. 63, Նիհար խ. 83, Անդրանիկ խ. 58, Արարատ խ. 59, Եփրատ խ. 90, Արծիւ 77, Տարօն խ. 72, Նուէրներ Սիփան լեռ 5, Տիրան 4, Դանուբ 20, Զարդ 5, Հայդուկ 5, Վէժ 5, Թոռակ 3, Խան 5, Արդար 5, Պարոյր 5, Թափառական 15, Էքռանմէ 5, Զաղացք 10, Արածանի 10, Հողագործ 20, Տարօն խումբի 1905-ի ապառիկ 42, պատկերներու հասոյթ 18, Սրճարանի հասոյթ 500: Գումար 1382 ֆր.

ԴԱՆՈՒԲ ԿՈՄԻՏԷ.— Իր ընթերցարանի հասոյթ 305 ֆր. 15 սան. Կարմիր Խաչի դեկ. գանձանակէն 77, Սերոբ Աղբիւր խ. 27, Ֆէդայի խ. 24, Նոր Դար 36, Զ. Արամ խ. 15, Զ. Գայլ խ. 21, Զ. Արարատ խ. 18, Զ. Նեմրութ խ. 29, Զինասէր խ. 12, Կարին խ. 21, Վարագ 36, Տրդատ խ. 12, Հազուլ խ. 24, Տրդատ խ-ի անդամ Բաբկէնիկ Նուէր 5: Գումար 662 ֆր.

ՎԱՐՆԱՅԻ ԿՈՄԻՏԷ. — Յառաջադիմական խ. 108 լեւ, Տարօն խ. 96, Կուկունեան խ. 70, Ոստանեանց խ. 85, Հայրիկ խ. 90, Հրայր խ. 39, Բողոք խ. 41, Ապաքար խ. 41. 50, Յակոբ Գալուստեան եւ ընկերներէ 10. 25, Արծիւ խ. 12, Առիւծ խ. 61, Կարմիր Խաչի Քրիստափոր խ. 14, Կարմիր Խաչի Սօսէ խ. մին. 120. 20: Գումար 787 լեւ 85 ս.

ՖԻԼԻՊՊԷի ԿՈՄԻՏԷ.—(սեպտ.—դեկտ.) Վազգէն խ. 48 լեւ, Օր. Կարմիր Խաչի Բ. տասնեակ 10. 50, Օր. Կարմիր Խաչի Գ. տասնեակ 30, ՊՕՐԻՍՈՎԿՐԱԴԻ Շմաւոնեան խ. 306. 60, Օր. Կարմիր Խաչի Ա. տաս. 9, Բ. տասն. 10. 50, Վասպուրական խ. 70, Օր. Կարմիր Խաչի Գ. տաս. 9. 50, Տուգանք Մ. Պ. է 10, Գ ա յ ա ն ը ք գ ի Անձնուրաց խ. 30 լեւ Օր. Կարմիր Խաչն Դ. տասնեակ 10. 50, եւս 10. 50, Գ. տաս. 15. 50, Վարդգէս խ. 19. 50, Թ ա թ ա ր Բ ա զ ա ր ճ ը գ ի Ֆէդայի խ. 27, Վրէժ Ա. տասնեակ 67, Հեքում-Գագիկ խ. 84, Հրայր խ. 33, եւս 34, Վազգէն խ. 31, Անցած շրջանի ապառիկներէն 46. 50, Պատանիներէ 30, Նուէր Յ. Ս. է 5: Գումար 947 ֆր. 60 սան.

ԿԱԼԱՑԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ.—(1905 յուն.—դեկտեմ.) հետեւեալ խմբ. Ծերունի 160 ֆր. Արծիւ 120, Տպլորիկ 50, Տարօն 75, Գայլ 50, Արեգակ 45: Գումար 500 ֆր.

ՔՕՆՍՏԱՆՑԱՅԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ.—(1905 յուն.—դեկս.) Անդրանիկ խ. 155 ֆր. Աղուարդ խ. 155. 50, Ծաղիկ խ. 59. 75, Սերոբ խ. 121, Զօր. Գանձ խ. 45, Ղեւոնդեան խ. 131, Եփրատ 130, Կարմիր Խաչ 15, Համակեր Մ. Ս. Փ. 24: Գումար 836 ֆր. 75 սան.

Համագումար 3887, 75 ֆրանք եւ 2417, 95 լեւ: